օրհնութեան, և ես չարաչար
վարեալ՝ արարի զէն անիրա-
ւութեան։ Սերմանեցեր ի միտս
իմ սերմն բարի առաքի-
նութեան, և ես փուշս զմեղսակ
մոլութեան բուսցի ընդ այն։
Զարիսն զոր պարգևեցեր ինձ
շնիլ նոքօք զկեանս, անմտա-
թեամբ իսով վատնեալ ի սնո-
տիս՝ սատակեալ ինձ մահ և կո-
րուստ։ Տիրոջն իշխանութ-
թեամբ և փառօք պատեցեր
զիս, և ես կամաւ մատնեցի
զանձն իմ ի ծառայութիւն մե-
զաց։ Եւ այժմ առ քեզ ապաշ-
նեալ ապաշխարեմ՝ բուսեա
զյանցանս իմ, և նորոգեա

զիս շնորհօք զորութեան քոյ։
Ծարաւի եմ առ քեզ Աստուած
իմ, արբո ինձ զջուրս կենդա-
նարար։ Ծանգահար եղէ ցան-
կութեամբ չարեաց, արկ զիս
ի բոլոր հալոցաց, և արբեա հր-
ամայ սիրոյ քոյ։ Բազմանք երկ-
բաւութեանց տարագիր արա զիս
առ ի քէն, կարկառեա առիս
զաջդ սքանչազօր, և մատո զիս
առ քեզ։ Փոխանակ մշանջե-
նաւոր և անանց փառաց, ըզ
դիւրեզծութեան և զապականա-
ցեալն սիրեցի, մի թողուր զիս
ի կամս իմ։ Տեզացին ի վերոյ
իմ թանաւոր նեռք անարեցիր
թշնամւոյն, լե՛ր ինձ վահան
սրտութեան և տեղի ապաւէնի
սրբեցուցանել զիս։ Արբուցեր
չարեաց հարբեն զնոգիս ի նա-
ռուծս անողջանալիս, մատիր

առ իս զմեռելամբ, և բժըշ-
կեան ամենանոր։ Թշնամիք
զանձն իմ պաշարեցին և ի լա-
ցեալս խաբէութեան իւրեանց
արգելին, զաչեսն զզօրութիւն
քո և եկ ի կենցաղանել զիս։
Մերկացուցին զիս անազարանք,
և վէրս ի վերայ վերայ յաւե-
լին. զի ոչ զգեցայ զզրահն ար-
դարութեան, և ոչ եղի ի գլուխս
իմ զսաղարտան յուսոյն փրկ-
կութեան. ոչ առի զմահանն
հաւատոյ, և ոչ զսուր բանին
Աստուծոյ. այլ զու հզօր և մե-
նակար՝ սուր զէն և զսաղար քո,
և արի՛ յօգնել ինձ. խորտակեա՛
զզօրութիւն հպարտացեալ բըռ-
նաւորին, և տա՛ զու ցանձն
իմ թէ փրկութիւն քո ես եմ։
Տրտմեալ է անձն իմ մինչև ի
մահ, մխիթարեա զծառայս քո։

Ապերախտ զաւագ առ երախտա-
ւորդ, և բարկացուցի զանբար-
կանալի բնութիւնդ. այլ զու
անդիշաչար՝ մի՛ հատուցաներ
ինձ ըստ անօրէնութեան իմում,
այլ ողորմութեամբ քո քաւեա
զիս։ Առ քեզ ազազակեմ ի խոր-
ոց անդնդոց յոր ընկղմեալս
եմ, որպէս Յովնան ի փորոյ
կիտին. հան զիս ի վհէս խա-
սարի, վերարերեալ ի լոյս կե-
նդանոյ յաւիտենից։ Արտասու-
զեալ եմ յանդունդս մեզաց կո-
ծրատեան, մատո զաչդ ամե-
նազօր, և փրկեա զիս։
Տանջիմ հանապազ ի խղճէ մը-
տաց՝ զի զառնացուցի զքաղցր-
ագութ Տէրդ իմ. և յոյզդ փա-
ռանակեան խորհրդոց աննրելի
ատանջանաց՝ որ պատրաստեալս
ունայ ինձ, իբրև լեռնացեալ ա-

մեհի ալեօք հողմակոծեն զանձն իմ. բարերար և անխաբել՝

հզօր այցելու օգնեա ինձ, և հանդարտեցո զմրրկեալ ալիս խռովութեան մտացս ցօդով զթութեան քոյ։

Բազմութիւն անօրէնութեան իմոյ՝ որպէս հեզեղք պղտորեալք զարնանագայր զետոց ողողեցին զմեզ ուցեալս. այլ զու մարդա-

սէր՝ շնչեա զհոգին քաղցրութեան կամաց քոց, և ցամաքեցո զհոսանս չարեաց իմոց. և ողորմութեամբ քով քաւեա զանօրէնութիւնս իմ, և թոսեկից արա սիրելեաց անուանդ քում սրբոյ. զի ընդ նոսին փառաւորեցից զանխափակալ մարդասիրութիւն քո, այժմ և միշտ

ԱՂՕԹՔ

ՈՒՐԲԱԹԻ ԱՒՈՒՐ

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ ամէն :

Հայր մեր որ յերկինս :

Աղօթք առ Հայրն երկնաւոր , ի բանից երանելւոյն Յովհաննու զառնեցւոյ :

Էապէս բարի և ամենակարող զօրութիւն Աստուած յաւիտենական , որ յայսմ ծուռ հրամայեցեր երկրի , և եհան զանառուն և զողունս և զգազանս քան ազգի . և չհանդուրժեալ բնութեամբ բարիդ՝ ա-

բարեր զմարդն ի հողոյ ի պատկեր և ի նմանութիւն արարչապետիդ տիեզերաց և կացուցեր տէր և իշխան բոլորեցունց քո արարածոց . և զգուշացուցեր զնա կալ ի պատուիրանի քում և ի վայելել զբարիսն զորս ետուր նմա ձրի և առանց փոխարինի ի քումմէ առատութենէ :

Եւ արդ Տէր իմ և Աստուած իմ՝ որ զիս հոգս անարգութեան այսպիսի անկշռելի բարութեան բարգաւաճեցեր , ես ինքնին հրապուրանաց թշնամւոյն կենաց անսացեալ՝ պատուիրանաց կենարարիդ հեռացի , և օտարացայ ի նմանութենէ հատողիդ իմոյ Աստուծոյ : Եղծի ըզ զեղեցկութիւն կերպարանաց հոգւոյս ազգի ազգի անօրէնու-

թեամբ, և ոչ զարհուրեցայ։ Պերճացուցեր զիս խոստովան մոտ խորշիլ ի չարէն և ընտրել զբարին. իսկ ես փարեայ անմոռութեամբ՝ յօժարեցայ ի չարիս։ Ամբարձեր զիս ի ներմանութիւն Աստուծոյ քո անձնիշխան կամօք. և ես ծառայ եղեալ կրից մարմնոյս՝ հաստատեցայ անասնոց անբանից։ Թոզի զլոյս հրամանաց քոց՝ զոր եաւր ինձ առաջնորդել նոքա զգնացս ոտից իմոց ի ճանապարհ ուղիղ երկնից օթևանին. և ես քնզ խաւար գնացեալ անկայ ի խորխորատ անդանդի կորստեան վիհ։

Այլ զու մարդասէր և երկայնամիտ՝ մի՛ խափան բարկանար ինձ, և մի՛ օխտ պահեր յաւիտեան. զի ի քեզ անկայ ես յարանգէ, և զու ես Աստուած իմ և Տէր։ Գթա՛ զիս ի զործս ձեռաց քոց, և նորոգեա զիանգարեալ մեզօք պատկեր բարերարութեան քո ի ձեռն Աստուածեղէն շնորհաց քոց։ Լուսաւորեա աչս զմտաց իմոց ուղղել զշաւիղս իմ ի ճանապարհս օրինաց քոց, Սանձակոծեա զերկրաքարշ բազմաթև և զանբան կրից բռնութիւն երկիւղիւ քով սրբով։ Վառեա զոգի իմ սիրով Աստուածութեանդ քո՝ մատուցանել պատարագ օրհնութեան քոյ հաճոյից բարերարութեան քո։ Մի՛ թողուր զիս ի ձեռս թշնամւոյն փրկութեան իմոյ, որ հանդերձեալ՝ է արկանել զիս ի խաւարն արտաքին այլ ի՛ր ոչ ցնորս բարեգթութեամբ քով, և

փրկեա զիս։ Անկա՛ւ բեկա՛ւ զօրութիւն իմ ի մահարեր հարուածոց հակառակորդին, և մէջք իմ կցեցան՝ ի հող ի ծանրութենէ բեռանցս մեղաց. այլ զա՛ ողորմած, յարո՛ զբազմամեղ անձն իմ, և զօրացո՛ զիս թօթափել զչարիս, և խոկալ զհրամանս օրինաց քոց։ Հարայ ի թառոյ անեղեալ թշուառին, և մահ մնեմն կոյ առաջի իմ յամենայն ժամ. զթա՛ յիս օրհնեալ և ամենողորմ, և մատո՛ ինձ զքեզ թանձրանալ ապաքինիչ երկնաձիր շնարհաց քոց. զի կեցից և փառաւորեցից զանճառ մարգարէութիւն քո այժմ և յանփոխճառն յաւիտեան. ամէն։

ԱՂՕԹՔ

ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ ԱՍՈՒՈՒՐ

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ ամէն.

Հայր մեր որ յերկինս։

Աղօթք առ սուրբ Աստուածածնէն, Իրանցից երանելոյն Յովհաննէս զառանցեալոյ։

Սատուած ամենակալ՝ անբաւելի և անճառելի, անաչխատ բնութիւն և անսպառնալի զօրութիւն, որ յայսմ սուրբ հանգեալ յամենայն գործոց քոց զոր արարեր. և օրհնեցեր զնա և սրբեցեր ամենեքեան խոր-

հըրդով և կանխագիտութեամբ
քով։

Արդ ես ծնունդ մեզաց՝ անկ-
եալ կամ յախտ դառնագին ցա-
ւոց հոգեկան վշտաւոց, զոր
շնչեաց յիս հողմն մահածին ի-
խանին խաւարի, և ոչ զոյ ինձ
հանգիստ ի ժնդակ տանջանացս։
Այլ դու ամենազօր՝ ապա՛ քինեա
զանբժշկելի հիւանդութիւն հոգ-
ւոյս աննահանջելի հրամանաւ
քով, և հանգո զիս յանհնարին
տանջանացս՝ որով հասեալ կամ
ի դրունս մահու. զի ամենայնի
կարող ես և հզօր, և չիք քեզ
իր անհնարաւոր։

Սէր երկրաւորացս և բաղձանք
հեշտալեաց գերեալ գերբեալ
զմիտս իմ՝ չարաչար վշտօք ծա-
ռայեցուցանեն զիս հանապազօր
ի զգալիս և ի անտես, և ոչ

երբէք տան դուլ և դադար ո-
գի առնուլ, և խոկալ խորհիլ
զելս ազատութեան յանտանելի
կրիցս կարեաց և դառն աշ-
խատութեանցս։ Եւ ահա ազա-
չեմ քեզ բարերար՝ որ փրկու-
թիւնդ ես ամենայնի և դիւրիչ
վշտաց նեղելոց, տուր ինձ զը-
տանել ելս ի տառապանաց աս-
տի յազատութիւն մշտնջենա-
ւոր կենաց և անանց հանգըս-
տեան, յորմէ մերժեալ են ցաւք
և հեծութիւնք։

Ալիք յանցանաց յուզեալք ի
հողմոյ հրապուրանաց բանտարկուին
բաղխեն զնաւակ մարմնոյս շինուածոյ, և ապառնան
խորասոյզ առնել յանդունդս
խաւարի անզերծ տանջանաց։
Իսկ դու բարեգութ փրկեա զիս
ի վշտաց ամենազօր աջովդ շը-

նարհի, և հատ ի նուաճանգիտան խաղաղութեան երկնային յարկի, ուր ամբարեալ պահին ամենայն գործք բարեաց և անդբաղ բերկրութիւնք։

Մի թողուր զիս Տէր Աստուած իմ ի կամս անձին իմոյ, զի մի ըստ յօժարութեան ապականեալ բնութեանս ստորաքարշ եղեց յանցուորս և ի անուախս. և մի՛ ի բացեայ առներ յինէն նահանջելով զնպաստս շնորհաց և ողորմութեան քս վասն անօրէնութեան իմոյ. այլ ըստ սովորական մարդասիրութեան քում խնայեա յիս ի ստեղծուածդ քո՝ որ առ քեզ ազազակեմ կոչելագին հեծութեամբ։ Լուր ինձ անտխակալ, զթա մարդասէր, ներեա անյիշաչար, և ողորմեա բազմամեղ անձին

իմոյ, ըստ մեծի ողորմութեան քում. արա առ իս նշան բարի ի փառս անուանդ քում սրբոյ, և քաւեա զմեղս իմ ի ձեռն ամենաբաւական շնորհաց քոց. զի քոյդդ ես դու Տէր, և զթութիւն քո անչափ։

Ազաչեմ քեզ մարդասէր՝ մի՛ մատներ զիս ի ձեռս դժոխորդական զազանաց, որ բացեալ զգ կոկորդս իւրեանց՝ խնդրել կ�զեղքել զհոգի իմ ամենածախ ժանեօք. հար զնոսա զօրութեամբ բազկի քո ի հարուածս անողջանալիս, և զերծո զիս զծուայս քո ի մոհաբեր վտանգէս. զի դու ես փրկութիւն իմ և կեանք, և առ ի քէն է օգնութիւն իմ յամենայն ժամ։ Տարակուսեալ վարանին վասն բազմութեան մեղաց իմոց, յոր-

ժամ նկարեմ առաջի աչաց տե-
սութեան մտացս զդատաստանն
անուշաս զմերկապարանոցյան-
դիմանութիւնն ամենայն զոր-
ծոց, զպատիժն սոսկալի մե-
ծոց, զպատերազմից և անդարձից, զհու-
րն ահշէջ, զորդն անմահ, և
զդատապարտութիւնն յաւիտե-
նական։

Եւ քանզի ոչ կարեմ իմովս զո-
րութեամբ թօթափել յանձնէ
զբեռին մեզաց, և ազատիլ
յարժանահատ պատժոցս. վասն
որոյ անձամբ բեկելով գոչեմ
առ քեզ մարդասէր, զործակից
լեր ինձ ի զառնալ յետս յանօ-
րէնութեան գնացից իմոց՝ և
զիմել առ քեզ յամենայն զո-
րութենէ և ի մտաց, և սրտա-
ռուչ զղջմամբ զտանել զթողու-
թիւն և զշնորհս, և զպրոմ-

թեամբ քով արժանաւորիլ ընդ
սուրբս քո մշանջենաւոր հան-
գըստեան յարքայութեան քում
յերկինս, և ընդ նոսին փառա-
ւորեալ անլռելի գոհաբանու-
թեամբ զամենազօր տէրութիւն
քո յամենայն յաւիտեանս ա-
մէն։

ԱՂՕԹՔ

Ի ԴԻՄ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

Երբ ասէ Քահանայն Տէր Աստուած մեր որոյ կարողութիւնդ անքննին է.

Դոռ ասա

Տէր իմ՝ անքննելի է Աստուածդ իմոյ կարողութիւն. և անմահ և անհասանելի են փառք քո. որպէս զողորմութիւնդ անչափ է, նոյնպէս և զթութիւնդ անբաւ։

Աղաչեմ զքեզ՝ բարեխօսութեամբ սրբոյ քահանայիս, յառատ ողորմութենէդ նայեաց ի սուրբ Տաճարս և յամենայն ժողովուրդս. նաև յիս անարժանս, և համարեա զիս աղօթակից սոցին, և պարգևեա առատապէս զողորմութիւնդ քո. վասն զի փառաբանիչ եմ սուրբ Երրորդութեանդ։

Երբ ասեն զՍուրբ Աստուածն. եւ մեծաւորն համբուրէ զԱւետարանն։

Համբուրելով ողջունեցից բանից սրբոց Աւետարանչացն, վասն զի կարօտ եմ ի լսել զզորմս Աստուծոյ։

Քահանայն ի ծածուկ ասէ. Տէր Աստուած մեր զբազկատարած զաղաչանս

Արարիչդ իմ Աստուած՝ որ ըզ մեր հոգեզէն բնութիւնս արժանաւորեցեր ըստ զասուց վերնոցն քեզ փառաբանութիւն մատուցանել. արժանի արա զանպիտան ծառայս քո՝ հզօրիդ փառս տալ այժմ և յաւիտեանս:

Դպիրքն՝ Տէր ողորմեա:

Ակն ունիմ առ քեզ Տէր և աղաչեմ. ողորմեա ինձ ի մեծ ողորմութենէդ քումմէ՝ զթալով ի ծառայս քո, և առաքեա ի վերայ իմ զողորմութիւնդ քո:

Քահանայն՝ Զի ողորմած և մարդասէր:

Մարգասիրին Աստուծոյ և ո-

ղորմածին տայց փառս և պատիւ այժմ և:

Երբ կարդան զԱւետարանն:

Աղաչեմ զքեզ Տէր իմ Յիսուս Քրիստոս, բաց զլսելիս իմ. սրբեա զմիտս իմ. արժանի արա լսելոյ բանից սրբոց Աւետարանիս քոյ, անմոռանալի մտօք

պահել զիրամայեալսն ի սմանէ յորում փառք քեզ Աստուած։

Եւ ասա զՀաւատամքն ընաև, եւ երբ ասիցես եւ ես խաղաղութեան։

Խաղաղութեանց տուող Հայր Աստուած. մաքուր և անբիծ հաւատով ի ժամ պաշտամանց աղօթից՝ աղաչեմ զքեզ. որպէսզի արժանի ընդունելութեան արասցես և լուիցես զձայն աղաչանաց իմոց. և ողորմութեամբ քով թողուցուս զյանցանս իմ. Տէր իմ աղաչեմ զքեզ՝ զի յամենայն ժամ մտցէ ողորմանարժանիս առաջի քոյ, զի անաւար և մեծ է տէրութիւնդ քո. և տուր ինձ միաբան լինել ընդ սուրբս քո ի մի հաւատս վաստակիլ բարեմտութեամբ իգործս արդարութեան.

և պահեսցես ի վերայիս զշընորհս արդարութեան և ողորմութեան քոյ Աստուած ամենակալ ազաչեմ կեցո և ողորմեա։

Քահանայն ի ծածուկ Տէր մեր Եփրկիչ։

Քրիստոս Որդի Աստուծոյ՝ որ վասն մեր համբերեցեր մահու

Խաչի . և զչարչարիլ յանձն առեր. և զառաւաստպարգև սուրբ Հոգին հանգուցեր յառաքեալսն Աղաչեմ զքեզ՝ արժանի արա և զիս առատ քոյին պարգևացդ մաքրելով ի մեղաց:

Քահանայն՝ Որպէս զի արժանաւորք:

Ընդ ամենեսեան արժանաւորապէս փառաւորեմ զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին այժմ և յաւիտեանս . ամէն:

Քահանայն՝ Խաղաղութիւն ամենեցուն:

Քեզ փրկչիդ իմոյ անկեալ երկիրպագանեմ. վասն զի դիտող ես ամ ենայն խորհրդոց և գործոց, Աղաչեմ՝ զքեզ պահեա զիս յերկիւղէ չարեաց, և նման քոյին ճշմարիտ երկիրպագողաց զիս զանարժանս համարեա, զի և ես ճշմարիտ հոգւով Քրիստոսի Աստուծոյդ իմոյ այժմ և միշտ և հանապազ երկիւղիւ երկիրպագանեմ. վասն զի քեզ սուրբ Երրորդութեանդ վայելէ փառք պատիւ այժմ և միշտ և:

Սարկաւագն՝ Մի՝ ոք յերեխայից, մի ոք ի Թերեհաւատից:

Աղաչեմ զքեզ Տէր՝ մի համարիր զիս ընդ երախայսն, և մի՛ ընդ այնոսիկ՝ որք թերագոյք են ի հաւատս զաւանութեան. այլ ի յազգէ մինչև յազգ զքեզ ծանեայ հարցն մերոց Աստուած. և ճանաչեմ Աստուած Աբրահամու և Աստուած Իսահակայ և Աստուած Յակոբայ, և աղաչեմ՝ զի մի՛ ընդ անմա-

քուր ապաշխարողս համարեա-
ցիս զմերձ կալս իմ առաջի քո։

Դպիրքն՝ Մարմին տէրունական և։

Քրիստոսի Աստուծոյ տէրունա-
կան մարմնոյդ և փրկական ար-
եանդ առաջի՝ հրեշտակային զո-
ղութիւնքն յաներևոյթս եր-
գեն, որպէս քեզ վայելէ՝ սբր-
բասացութիւն Տեառնդ զօրու-
թեանց. և որ զիմ նուաստու-
թիւնս արժանաւորեցեր փառա-
բանիչ լինիլ, ընդ նոսին նուա-
գելով, սուրբ Տէր՝ սուրբ Տէր՝
սուրբ Տէր. և Որդի Աստուծոյ
և Տէր զօրութեանց քեզ փառք
յաւիտեանս. ամէն։

Սարկաւագն՝ Սաղմոս ասացէք Տեառն
Աստուծոյ։

Տէր իմ Յիսուս Քրիստոս փառք

քեզ. որ վասն մեր փրկութեան
խոնարհեցար և յանձն առեր
պատարագիլ ի միջի մերում
մարմնով և արեամբ քով սբր-
բով։

Դպիրքն եղանակեն զՍրբասացութիւնն։

Քրիստոս Աստուած՝ որ խոնար-
հեցար մարմնով և արեամբ քո
գալ ի պատարագիլ գառնդ ա-
նարատ. և հրեշտակային սպա-
սաւորութեամբք լցեր զեկեղե-
ցի քո սուրբ. և զիս զանար-
ժանս արժանաւորեա ընդ նո-
սին զսրբասացութիւն քեզ մա-
տուցանել. ամէն։

Սարկաւագն՝ Եւ ևս խաղաղութեան։

Խաղաղութեանց տուող Քրիս-
տոս Աստուած՝ անկանիմ յաղօ-

թըս առաջի սուրբ սեղանոյդ Աստուծոյ. և աղաչեմ զքեզ ահիւ մեծաւ, ոչ խղճիւ գայթակղելով, ոչ սրտիւ խորամանկելով, ոչ պատրանօք խաբողին, և ոչ երկմիտ և թերի հաւատով. այլ աղաչեմ՝ յաղթեա խաբողին, և պահեա յուղիղ վարս, ի պարզ միտս, և միամիտ սրտիւ ունիլ զկատարելապէս հաւատս հատուցանել զփոխարէն սիրոյ քոյ։ Ընդունիցես ինձ Տէր առաւելուլ ի յամենայն գործս բարութեան. անկեալ կամ յաղօթս առաջի սուրբ սեղանոյդ Աստուծոյ իմոյ. և խնդրեմ գտանել զողորմութիւն քո ի մեծի աւուր յայտնութեան քոյ, Յիսուս Քրիստոս փրկիչ իմ կեցո և ողորմեա։

Քահանայն ի ծածուկ՝ Տէր Աստուած զօրութեանց և։

Թագաւոր յաւիտեանց՝ քո են ամենայն արարածք և զօրութիւնք. և զմեր հողեղէն ներաստութիւնս սիրեցեր մարդասիրութեամբդ. և խոնարհեցար ի մեր մարդկային սպասաւորելն։ Աղաչեմ զքեզ Տէր՝ զի և ինձ լիցիս ի բժշկութիւն շնորհօք մարդասիրիդ Աստուծոյ և Տեառնդ իմոյ Յիսուսի Քրիստոսի. ընդ որում քեզ Հօր և Հոգւոյդ սրբոյ փառք յաւիտեանս. ամէն։

Սարկաւագն՝ Ողջոյն տուք միմեանց։

Մերձ առ դուռն կենաց անկեալ կամ առաջի Տեառնդ իմոյ աղօթելով և աղաչեմ արժանաւոր-

եւ զիս Տէր Աստուածային խորհրդոյս։

Սարկաւագն՝ Ահիւ կացցուք երկիւղիւ կացցուք։

Մեծ է ահ և երկիւղ քո ի վերայ իմ շնորհեա բարւոք զգուշանալ ինձ առ քեզ՝ Տէր իմ և Աստուած։

Սարկաւագն՝ Պատարագ Քրիստոս մատ։

Քրիստոս գառն Աստուծոյ՝ որ մատչիս պատարագ վասն փրկութեան մերոյ. զու ես զորմութիւն և պատարագ խաղաղութեան, և արժանի օրհնութեան։

Քահանայն՝ Շնորհք սէր և աստուածային սրբարար։

Հայր և Որդի և սուրբ Հոգի՝ հանգո ի վերայ իմ զշնորհս և

զսէր քո Աստուածային զօրութեանդ՝ զոր ետուր մեզ պատարագիլ ի քահանայէս, հատո զփոխարէն ընդ հոգւոյ սորա։

Սարկաւագն՝ Զղրունս զղրունս ամե։

Աստուած իմ առ քեզ ի վեր ընծայեցից զմիտս իմ սրբութեամբ Աստուածային երկիւղիւդ. և առ քեզ ունիմ զյոյս իմ Տէր ամենակալ։

Սարկաւագն՝ Եւ զոհացարուք զՏեառնէ։

Զոհանամ արժանաւորապէս բոլորով սրտիւ իմով զմխիթարիչ սուրբ Հոգւոյդ։

Քահանայն ի ծածուկ՝ Արժան է ստուգա

Գիտեմ Տէր՝ վասն զի ոչ բաւ հանդուրժել և կալ առաջի ք

երամ գասուց հրեշտակաց ի լուսափայլ շնորհաց Աստուածութեանդ. ով Տէր Աստուած իմ՝ մեծ են շնորհք Աստուածութեանդ քոյ. զի զմեզ արժանի արարեր զքոյին Աստուածային մարմինդ ի միջի մերում պատարագ մատուցանել. և հաճելի եղև մեր ապաւորելն Աստուածութեանդ քում ընդ սերովբէիցն և քերովբէիցն միաձայն համարձակելով և ընդ նոսին ասելով. սուրբ սուրբ Տէր զօրութեանց՝ լի են երկինք և երկիր փառօք քո։

Բահանայն ի ծածուկ՝ Սուրբ սուրբ սուրբ ես ճշմարտապէս և։

Ընդեմբ զքեզ Ա.....ած Հայր ընդ Որդւոյդ միածնի և ազա-

տիչ սուրբ Հոգւոյդ, որ ոչ անտես արարեր զպարտեալն ի ձեռաց մահու զնախնի հայրն մեր. և զամենեսեանս, զորս քեզ յորդեգրութիւն կոչեցեր միբրտութեամբ սուրբ աւազանին.

և վասն մերոյ փրկութեան ուրաքեցեր զՈրդիդ սուրբ մար-

մնանալ ի սուրբ կուսէն, բառնալովզղատապարտութիւնյան ցանաց նախամօրն մերոյ որ վասն մեր ի մարդոյս զչարչարիլն մարդապէս կրեաց և զմեռանիլն կամաւ հօրդ յանձնէաւ: Զքեզ Որդի Աստուծոյ փառաւորեմ, որ ետուր մեզ հաւատացելոցս ի միխիթարութիւն ընդ սրբոյ մարմնոյ քում և ընդ պատուական արեանդ զհացն կենաց, և զբաժակն փրկութեան ի մաքրումն. աղաչեմ զքեզ Տէր արժանաւորեա զիս զանարժանըս լինիլ տաճար մարմնոյդ սրբութեան, և բաժակի սրբոյ արեանդ բնակարան։

Ցայտնի է Տէր՝ զի ոչ կարէ կեալ առաջի քոյ երկինք երկնայնօք, և երկիրս երկրայնօք. այլ վասն զի քո եղև կամքդ։

Քահանայն՝ Առէք կերէք, և արբէք ի սմանէ:

Աստուած մարդասէր որ առաքեցեր զՈրդիդ քո, և նորին Աստուածային կարողութեամբն զհայրական գթութիւն քո ծանեաք. վասն զի Աստուածապէս էր խաչիլն կամօք վասն մեր. սոյնպէս ժուժկալութիւն երեքօրեայ թաղմանն, և երանաւէտ յարութիւնն. և Աստուածային համբարձումն փառօք հօրդ, և ընդ աջմէ քումմէ նստիլն. զորս հաւատամ և երկիրպագանեմ։

Քահանայն ի ծածուկ՝ Զահաւոր զփառաւորեալ զմիւսանգամ:

Զքեզ Քրիստոս Որդի Աստուծոյ յանարատ կուսէն ծնեալ հաւա-

տամ. և միւսանգամ գալստեանդ ակն ունիմ. և զքեզ փառաւորելով օրհնեմ յամենայնի օրհնեալ:

Քահանայն ի ծածուկ՝ Զքեզ արդարև Տէր Աստուած մեր գովեմք:

Տէր՝ մեծ և անուր է խորհուրդս այս խոնարհութեանդ քում. օրհնեմք զքեզ. զի սովաւ զմեզ գունայնացեալս ոչ անտես արարեր. այլ սեպհականեցեր. և զքեզ Տէր Աստուած գովեմք և փառաւորեմք յաւիտեան ամէն:

Քահանայն ի ծածուկ՝ Երկիրպագանեմք՝ և աղաչեմք և խնդրեմք ի:

Յիշեա Տէր՝ զի դու միայն ես մաքուր ի մեզաց անարատ և անապական Հոգի Աստուծոյ.

քանզի ամենեքեան ի սատէ քումմէ որպէս մոմ ի հուր հալիմք. և ունիմք զքեզ միջնորդ և վասն մեր բարեխօս և պատարագիչ փրկական մարմնոյ և արեան փառակցին քում սրբոյ՝ ընդ ձեռամբ սուրբ քահանայիս:

Աղաչեմք զքեզ Տէր, զի մարդասիրութեամբ քոյ արժանաւորեցեր հանգուցանել ի վերայ սորա զշնորհս Հոգւոյդ սրբոյ. վասն զի մեր ամենայն հաւատացելոցս ի քեզ՝ յիւրաքանչիւր կերպս և ի կարիս որք կենդանիքս եմք այժմ, և որք հանգուցեալք են ի քեզ, ընդհանուր ամենեքեանս սորին պատարագչութեամբն հաստատեալ կամք ի յոյս և ի հաւատս մեր.

Քահանայն՝ Ընդ որս և մեզ այց արաս:

Աղաչեմ ներեա Տէր, այց արա և ինձ մեղուցեալոյս. որպէս զի լուացայց ի մեղաց յառաջ քան զելանելն իմ յաստեայս և այլ ոչ ևս դարձայց։

Քահանայն՝ Աստուածածնին սրբոյ կու:

Ի սուրբ Պատարագիս յիշատա-

կեսցի ամենասուրբ մայրդ Աստուծոյդ. և ամենագովելի մըկրտիչն. և նախավկայն քո. ողաչեմ յիշեա Քրիստոս Աստուած և զիս զանարժանս ընդունելովք իմովք և ողորմեա ինձ։

Սարկաւագն՝ Առաքելոց սրբոց:

Ցիշատակաւ սուրբ Առաքելոցն որք դարձուցին զաշխարհս ի կռոցն ի պաշտելութենէ յԱստուած գիտութիւն, աղաչեմ յիշեա զիս զանարժանս ընդունելովք իմովք:

Սարկաւագն՝ Առաջնորդացն մերոց:

Սուրբ Առաջնորդացն և մերոց Հայրապետացն՝ և որք զմեզ լուսաւորեցին ի հաւատս սուրբքս, յիշատակաւ նոցին աղա-

չեմ յիշեա և զիս Տէր զանարժանս ննջեցելովք իմովք ի սուրբ պատարագս

Սարկաւագն՝ Միանձնացելոց:

Աղաչեմ զքեզ Տէր՝ աղօթիւք սրբոց Միանձանց ճգնաւորացն, և որոց նոցա աշակերտեցան. սուրբ պատարագիս յիշատակեսն զանարժանս ննջեցելովք իմովք յիշեա:

Սարկաւագն՝ Թագաւորաց հաւա:

Ըստ որում յիշատակէ սուրբ պատարագս զթագաւորսն և ըզ հաւատացեալ իշխանսն, աղաչեմ և զանարժանս իմովք ներնջեցելովքս յիշեսցես ողորմութեամբ քով:

Սարկաւագն՝ Ընդհանուր ամենայն հաւատացելոց:

Տէր Աստուած՝ յուսովն մեր ակն ունիմք ի շնորհս սուրբ պատարագիս. զի սովաւ եղիցի յիշատակութիւն ընդհանուր հաւատացելոց ի քեզ. և ոչ անտես առնելով զարս և ըզ կանայս, զծերս և զմանկունս, և որք ի չափ հասակի առ քեզ են հանգուցեալք. Աղաչեմ ըզ քեզ Քրիստոս Աստուած, զի և ինձ անարժանիս՝ և ամենայն հաւատացեալ ննջեցելոցն սուրբ պատարագս եղիցի յիշատակ. Տէր Աստուած կեցո և ողորմեա:

Քահանայ ի ծածուկ՝ Յիշեա Տէր:

Աստուած յաւիտենական՝ աղաչեմ զքեզ յերեսս անկեալ մաղ-

թանօք. զի շնորհօք ողորմութեանդ քոյ պահեացես անշարժ հաստատութեամբ զբնակարան երկնաւոր զօրութեանցդ՝ զտեղի ապաստանիս զտուրբ և զառաքելաշնորհ Կաթուղիկէ Եկեղեցիս, Եպիսկոպոսապետօք և Եպիսկոպոսօք, Քահանայիւք և Սարկաւագօք, և զամենայն ժողովուրդն. ամէն.

Սարկաւագն՝ Գոհութիւն և փառաբանութիւն:

Քեզ Աստուծոյդ իմոյ տայ զանչափ գոհութիւն և զբառաբանութիւն, որ արժանաւորեցեր զմեզ սրբոյ պատարագիս։ Դու Տէր՝ որ ի յերկնից իջեր ի վերայ երկրիս, խնդրելով զկորուսեալ և զմոլորեալ ոչխարս. վասն զի դու ես հովիւ բարի՝

որ եդեր զանձն քո ի վերայ բանաւոր հօտիս. և յաշխարհ եկիր՝ զի զմեղաւորսն կեցուցցես սրբութեամբ, որ և առաջինն ես եմ կորուսեալ. ողորմեա ողորմած, և յարարածս քո գթա, գթասէր. ողորմեա և ստեղծուածոյ ձեռին քո՝ և Հայրապետիս մեր (այս անուն) կեալ որպէս՝ վայելէ Հայրապետաց սրբոց։ Ընդ նմին պարգևեա շնորհս Քահանայից՝ որք այժմ աստ, և ընդ ամենայն սիրելի սրբոյ պատարագի մատուցանողք են։ Դարձեալ աղաչեմք զքեզ Տէր. զի տացես յաղթութիւն թագաւորաց քրիստոնէից՝ կալ ի պատերազմի ընդդէմ հակառակի Աչին Քրիստոսիդ։ Դարձեալ աղաչեմ զքեզ սուրբ Երրորդութիւն,

վան ամենայն հաւատացելոց ննջեցելոց. առաւելապէս և վան թագաւորաց մերոց, որք վերստին հաստատեցին զազգս Հայոց. սոյնպէս և զիս զանարժանս այժմ, մանաւանդ և զննջեցեալսն մեր, զթալով յիշեսցես. հանգո Քրիստոս եւ ողորմեաց ամենայնի:

Քահանայն ի ծածուկ՝ Յիշեա Տէր:

Աղաչեմ, յիշեա Տէր և ողորմեաց այնոցիկ՝ վասն որոց սուրբ պատարագս մատչի. և մեզ ամենեցուն գտանել զհոգեւոր պէտս և զմաքրութիւն մարմնոյ. Աղաչեմ, հան յինէն ըզ սիրտ քարեզէն. և շնորհեա առատաձեռն լինել ինձ առ պէտս սրբոյ եկեղեցւոյ քո, տալ և աղքատաց վասն սիրոյ՝ և

զհարիւրապատիկն առից. հանգո և զննջեցեալսն մեր, վասն զի ի քեզ յանձն արարաք յիշատակութիւն. և քեզ փառք յաւիտեանս, ամէն:

Քահանայն՝ Եղիցի ողորմութիւն:

Օրհնեալ ես Քրիստոս Աստուած մեր, որ արժանաւորեցեր ըզ մեզ շնորհաց և ողորմութեան քում, պարգևիլ մեզ սուրբ քահանայիս: Վասն որոյ՝ ըզ քեզ ընդ Հօր և սուրբ Հոգւոյդ փառաւորեսցուք, այժմ և յաւիտեանս ամէն:

Քահանայն ի ծածուկ՝ Աստուած ծըշմարտութեան և Հայր ողորմութեան:

Տէր յիմ և արարիչդ՝ որ ոչ զարշեցար ի մէնջ կոչել զմեզ յորդեզրութիւն Հօրդ երկնաւո-

բի. և մեք այսուհետև համարձակեցաք Հայր ասել. թէպէտ և ոչ եմք արժանի Քոյց որդ՝ այժմ սկսայց խօսիլ առ Տէրդ իմ. քանզի ես հող եմ և մոխիր իսկ, որդն եմ և ոչ եմ մարդ, նախատինք մարդկան և արհամարհանք ժողովրդոց. տուր ինձ բան՝ որ բանայ զբերան իմ. զի ի քէն են ամենայն տուրք բարեաց, և ամենայն պարգեւք կատարեալք ի վերուստ իջեալ ի Հօրէն լուսոյ, Պաղատիմ անարժանապէս և աղաչեմ աղերսանօք. զի մի զարձայց տառապանօք. այլ հանդիպիլ արժանաւորեցայց, յոր յուսամ. և այսպէս եկիցս ուրախութեամբ և հաստատեալ սրտիւ իմով առ քեզ։

Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում, զի ի քեզ յուսացաւ անձն իմ. ողորմեա ինձ Տէր զի հիւանդ եմ ես. ով բժիշկ հոգւոց և մարմնոց՝ ահա մերձ կամ անտարբերեմիք քոյ. բուռն հարեալ զանարատ ոտից քոց. այսպէս պաղատիմ և աղաչեմ հանդերձ սրտիւ բեկեալով և խոնարհութեամբ. քաւեա զիս զմեղաւորս. թողութիւն արա ինձ անպիտանիս և տառապելոյս, նայեաց ի տուրբ ընակութենէ քումմէ ի վերայ իմ եղկելոյս։

Քահանայն՝ եւ տուր մեզ համարձակաձայն բարբառով։

Ամենակալ Աստուած՝ և ամենայն զոյից արարիչ, որ զայս հրամայեցեր Որդւով քով ուսանիլ մեզ աղօթելով առ Հայ-

ԸԸԴ. ոչ առաւելաբանել իբրև զհեթանոսս, այլ ասեմք. Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի. ըզհաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր. թող մեզ զպարտիս մեր՝ որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի տանիր զմեզ ի փորձութիւն. այլ փրկեա զմեզ ի չարէ. զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Քահանայն ի ծածուկ՝ Տէր Տէրանց Աստուած Աստուծոց։

Յամենայնի Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ զքեզ աղաչեմ. մի տար զիս ի փորձութիւն և

մի՛ ի դատապարտութիւն. այլ ողորմեա և փրկեա և ապրեցո յամենայն չարեաց. վասն զի քո է արքայութիւն և փառք յաւիտեանս. ամէն։

Քահանայն ի ծածուկ՝ Որ աղբիւրդ ես կենաց և բղխումն։

Բղխեա ծարաւելոյս ի շնորհաց սուրբ հոգւոյդ, վասն զի քո առաջի անկեալ երկիրպագանեմ արժանաւորիլ Աստուածային լուսոյդ։

Քահանայն՝ Քրիստոսիս Յիսուսիս։

Քրիստոսի Յիսուսի Որդւոյդ Աստուծոյ տացուք փառք Տեառնդ մերոյ այժմ և յաւիտեանս։

Սարկաւագն՝ Պռոսխումէ։

Խոստովանիմ և հաւատամ զի

դու ես Որդի Աստուծոյ, որ բարձեր զմեզս աշխարհի. դու ես միայն սուրբ. դու ես միայն Տէր իմ Յիսուս Քրիստոս։

Յորժամ Քահանայն բարձրացուցանէ զՍկիհն ակնարկեալ ժողովրդեանն։



Երկիրպագանեմք քեզ Քրիստոս՝ փրկութիւն աշխարհի, բան Հօր, պատարագ կենդանի, ճշմարիտ մարմին անարատ Աստուածութեան, և կատար-

եալ մարդ, որպէս բերանովս խոստովանիմ, նոյնպէս և հոգւոմս դաւանիմ և հաւատամ։ Աղաչեմ զքեզ Որդի սուրբ Աստուած Տէր ամենակալ՝ շնորհել մեզայ իմոց թողութիւն, և տալ ծառայիս հոգի զգաստութեան. որ և փրկեցայց քեզ ի յաւիտենական հրոյն վանկամաւոր չարչարանաց քոյ, զի դու ես ճշմարիտ Գառն Աստուծոյ՝ որ բաշխիս ի փրկութիւն ազգի մարդկան, և բառնաս զմեզս աշխարհի։ Հաւատամ յամենասուրբ Երրորդութիւն ի Հայր և յՈրդի և ի սուրբ Հոգին. հաւատով ճաշակեմ զսուրբ և զկենդանարար Մարմինդ քո ի քաւութիւն և ի թողութիւն մեղայ իմոց. հաւատով ըմպեմ զանապական և զմեղսաբաւիչ

Արիւնդ քո սուրբ ի թողութիւն մեղաց իմոց։

Քահանայն՝ Օրհնեալ Հայր սուրբ։

Օրհնեմ զքեզ Հայր սուրբ Աստուած ճշմարիտ. և հաւատամ ընդ որդւոյ և ընդ սուրբ Հոգւոյդ։

Քահանայն՝ Օրհնեալ Որդիդ սուրբ։

Օրհնեմ զքեզ Որդիդ սուրբ Աստուած ճշմարիտ. և հաւատամ ընդ Հօր և ընդ Հոգւոյն սրբոյ։

Քահանայն՝ Օրհնեալ Հոգիդ սուրբ։

Օրհնեմ զքեզ Հոգի սուրբ Աստուած ճշմարիտ և հաւատամ ընդ Հօր և ընդ Որդւոյ։ Խոստովանիմ զՆերբողութիւնդ ան-

բաժանելի և զմիութեանդ Աստուածութիւնդ. ամէն։

Քահանայն ի ծածուկ՝ Նայեաց Տէր մեր Յիսուս Քրիստոս յերկնից։

Որ ի Հօրէ ոչ մեկնեցար Որդիդ Աստուծոյ. այժմ է ի միջի մերում շնորհք սուրբ Հոգւոյդ. արժանաւորեա և զիս զանարժան՝ գտանել ողորմութիւն ի քէն։

Քահանայն ի ծածուկ՝ Տէր Աստուած մեր որ կոչեցեր զմեզ։

Աստուած յաւիտենից, որ շընորհիւ սուրբ աւազանին ի քրիստոնէութիւն կոչեցայ. և արժանի եղէ տեսանել զպատկերդ փրկական. վասն զի յանճառելի միութենէդ սրբոյ Երրորդութեանդ խոնարհեցար ի

մարդկեղէն բնութիւնս մեր և մարմին ստացար յանարատ կուսէն Մարիամայ վասն փրկութեան մերոյ Յիսուսեանց, և ետուր մեզ մխիթարութիւն:

Եւ որպէս առեր հաց և գինի՝ ՅԱստուածային մարմին և յարիւն յօրինեցեր. և ետուր քո-

յին գնեալ արեամբդ հաւատացեալ ծառայիցդ, յիշատակ քեզ մնալոյ, և փրկութեան մերոյ։ Եւ ես մեղաւորս արտաքսելից հառաչմամբ գոչելով ազաղակեմ առ ճշմարիտ Նախատիպ և յարացոյց պատկերդ Քրիստոս. և որպէս զի կարող ես Տէր՝ փրկեա զիս։

Քահանայն՝ ի սուրբ ի սուրբ պատուական մարմնոյ։

Սուրբ սուրբ սուրբ է Մարմինդ տէրունական. որ վասն մեր իջեր յերկնից և բաշխես ի միջի մերում, զքեզ գիտեմ կեանք իմ և յոյս յարութեան. զոր քաւիչ մեզաց խնոց և մաքրութիւն յանցանաց. և քեզ վայելէ երկնաւոր թագաւորիդ սմենայն քաղցր սաղմոսերգու-

թիւնք և հոգևոր պաշտօնք։

Դպիրքն՝ Քրիստոս պատարագեալ։

Ո՛վ անբաւ բարեաց Տեառնդ, անկեալ երկիրպագանեմ։ Վասնզի տակալի է խորհուրդ Որդւոյդ Աստուծոյ, որ այսօր պատարագեցար ի միջի մերում. և զՄարմին քո բաշխելով ետուր մեզ ի կերակուր, և զԱրիւնդ քո տուրբ նոյնպէս ցողեցեր ի մեզ։ Արժանաւորեա կոչմանս ի ճաշակումն ազաչեմ Տէր. վասն զի քաղցր ես՝ ալէլուիայ. ընդ հրեշտակս քո օրհնեմք՝ ալէլուիայ և ընդ ամենայն քո զօրութիւնդ՝ ալէլուիայ։

Քահանայն ի ծածուկ՝ Հայր տուրբ որ անուանեցեր։

Օրհնեալ ես հայր Տեառն մերոյ

Յիսուսի Քրիստոսի. որ զմեզ որդիս քո անուանեցեր մկրտութիւնամբ տուրբ Աւազանին. և այժմանիկաւ ազաչեմզքեզ Տէր՝ արժանաւորեա փրկագործ տուրբ խորհրդոյդ, որպէս զի լիցի ինձ ի քաւութիւն. պարգևեա ի շնորհաց տուրբ Հոգւոյդ հաստատելոյ ինձ զիսուտ մեղաց. ազաչեմ Տէր՝ ամենայն կարօտեալս առնել զբարիս, վասն զի զու Տէր՝ խոստացար մեզ որոց արժանաւորին՝ զկեանն. և ես զոհութեամբ փառաւորեմք զՔեզ Հայր և զՈրդի և զտուրբ Հոգիդ. ամէն։

Քահանայն ի ծածուկ՝ Հաւատով հաստատեսցի յամենասուրբ։

Զնորոգութիւնդ և զմի Աստուածութիւնդ հաստատեսցէ Հայր

և զՈրդի և զսուրբ Հոգիդ. ամէն։ Հաւատով հաւատամ և երկիրպագանեմ անմահիդ Աստուծոյ և արարչիդ ամենայն եղակնացս, որ զպատուական Մարմինդ և զԱրիւնդ ոչ խնայեցեր վասն մերոյ փրկութեան. արա արժանի զանարժանս և ողորմեա. ամէն։

Սարկաւագն Երկիւղիւ և հաւատով։

Տէր իմ և Աստուած իմ՝ մի յիշեր զմեզս իմ, զի ոչ եմ բաւական. ես որպէս զմարդ մեզայ, և զու Աստուածապէս թողութիւն շնորհեա։

Երբ հաղորդիս ասա։

Զբերան իմ բացի և առի զՀոգի, ի պատուիրանս քո փափաքեցաւ անձն իմ։

Քահանայն՝ Կեցո Տէր զժողովուրդս։

Օրհնեալ և սաստուած ճշմարիտ. որ արժանի արարեր զիս զանարժանս հաղորդիլ Մարմնոյ և Արեան քում, և կենդանացեա զիս կենալ ժառանգութեամբ քո. և զօրութեամբ քո բարձրացայ ի վերայ թշնամեաց իմոց. լցայց և բարեխնամեալ քումմէ Տէր ճաշակմամբդ քոյ սրբոյ. փառք ի բարձունս կերակրողիդ Աստուծոյ. և ակն ունիմ, զի և հանապազ հոգևոր օրհնութեամբդ կերակրես զմեզ. և քեզ Քրիստոս Աստուած՝ փառք յաւիտեանս. ամէն։

Սարկաւագն՝ Եւ ես հաւատով ընկ։

Մեք՝ որք ընկալաք արժանաւորապէս զանմահ և զանապա-

կան խորհուրդ սրբոյ Պատարագիս՝ զՏեառնէդ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ զոհանամք և փառաւորեմք։

Քահանայն ի ծածուկ՝ Գոհանամ զքէն Քրիստոս Թագաւոր։

Քրիստոս Աստուած՝ զքէն գոհանամ, որ արժանաւորեցեր զիս զանարժանս այս մեծի շնորհացս. այլ ես ապաչեմ զքեզ՝ զի սովաւ պահեցես զիս անարկիւզ յամենայն կրից բոնաբկութեն։ Հովիւ բարի՝ որ փան հօտիդ քոյ զմոռ ճաշակեցեր, և ոչ կամեցեր լուծանիլ ի հօտէդ քումմէ. այլ արժանի արարեր քեզ հետևիլդ Աստուած իմ և Տէր Յիսուս Քրիստոս՝ քեզ փառք յաւիտեանս. ամէն։

Քահանայն՝ Որ օրհնեանս զայնոսիկ։

Օրհնեմք զքեզ Քրիստոս Աստուած, և յուսացեալ կամք ի քեզ. զի և զմեզ կենդանացես փառաւորել զժառանգութիւնդ քո. պահեա և հաստատեա զայս եկեղեցւոյ քոյ սրբոյ, կատարել զլրումն ողջունի քոյ. ազատեմք՝ և զմեզ փառաւորեա Աստուածային զօրութենէդ քումմէ. մի՛ թողուր զմեզ Տէր, ապաչեմք զքեզ՝ տուր զքո խաղաղութիւնդ ամենայն եկեղեցեաց քոց, և աշխարհի, և քահանայից, և մերոց թագաւորիս, և ամենայն թագաւորաց քրիստոնէից և զինուորեալ մանկանց նոցա, և ամենայն ժողովրդեանս։ Վասն զի ամենայն բարի և պարգև ի հօրէ

Աստուծոյ ի քեզ կատարեալ հանգեստ. Որպէս Աստուծոյ Քրիստոս Աստուած, քեզ փառք այժմ և յաւիտեան յաւիտենից. ամէն։

Քահանայի՝ Կատարումն օրհնաց և։

Քրիստոս Որդի Աստուծոյ՝ որ կատարեցեր զօրէն, և լցեր զամենայն ստացեալս իմարգարէից. լինիցի զքոյին հայրական մեծութիւնդ, լից և զմեզ Հոգւովդ քով սրբով, և քեզ փառք յաւիտեան. ամէն։

Սորք արդոյն Յովհաննու զան-
ցեցոյ առաքեալ առ Տէրն մեր
Յիսուս Քրիստոս ի ժամ սուրբ
Պատարագին:

Գառն Աստուծոյ Տէր իմ և Աս-
տուած Յիսուս Քրիստոս, որ
զենար ի վերայ Խաչին և բար-
ձեր զմեզս աշխարհի: Մեզուց-
եալ ծառայս և ծանրաբեռ-
նեալս յանցանօք մեզայ անկեալ
ուղղեսջիս զքեզ Տէր իմ և Աս-
տուած իմ: Ողորմեա ինձ որ-
պէս ողորմեցար հաճօրէն ամե-

նայն աշխարհի. զի զու ես յոյս
և յոյս աշխարհի, ճանապարհ և
ճշմարտութիւն և կեանք։
Զմահացեալս մեզօք և զանօ-
րինեալս յանցանօք՝ մի՛ անտես
առներ Տէր իմ. այլ ողորմեա
ինձ վասն ամենայն անօրինու-
թեան կրկցդ՝ որոց տարար համ-
բերութեամբ բազում։
Յիշեա ամենակեցոյց Տէր՝ զի-
ջումն քո ի հայրական ծոցոյ,
և զմարմնանալն ի սուրբ կուսէն
Մարիամայ։ Յիշեա՛ ամենօրի-
նեալ Տէր՝ զշրջիլն քո որպէս
զմարդ ի մէջ մեզաւորացս մարդ-
կան։ Յիշեա ամենեցունց սուրբ
Տէր զմկրտիլն քո ի Յորդանան
ի Յովհաննէ։ Յիշեա ամենա-
զէտ Տէր՝ զպարսաւանն ի զբա-
տացն, և զխորձանն ի փա-
րիսեցւոց։ Յիշեա յառաջաւոր

Տէր՝ զմատնիչն ի Յուդայէ, և
զքամահիլն ի քահանայիցն։
Յիշեա ամենօրհնեալ Տէր՝ զբա-
բբռնիլն ի պարտիզին, և զբ
ձեռնակապիլն ի խուժանէն։
Յիշեա ամենակարող Տէր՝ զկալն
առաջի Կայիափայի, և զնար-
գումն ի յԱննայէ։ Յիշեա անո-
խտակալ Տէր՝ զապտակն և զկա-
ռափն ի կատաղեացն։ Յիշեա
արքայ արքայից՝ զկապանօք
կապիլն ի յաստենի Պիղատոսի,
և զգանիլն ի նմանէ։ Յիշեա
երկայնամիտ Տէր՝ զթուքն յՆր-
բայեցւոց, և զծեծն եղեգամբ։
Յիշեա անմոռաց Տէր՝ զքզամբ-
թիլն կարմիր, և զպսակն փշե-
ղէն։ Յիշեա անյիշաչար Տէր՝
զժամն զայն յորժամ բարձեր զ
Խաչափայտն կենսաբերս։
Յիշեա բարձրեալ՝ զբարձրանա-

լոյս քո խմերայ կենդանարարարարդ
Աստուծոյ, և զպարգևսդիրն բա-
ւեռաք։ Յիշեա՛ մի՛ մոռանար
զպարգևսն ծարաւոյն՝ զճաշակ
լեզուին և զքաղցեալն։ Յի-
շեա՛ մի՛ մոռանար զձայնն է-
լի էլի և զխոցումն ի զինուո-
րէն։ Յիշեա մի՛ մոռանար զնո-
սումն վարդապետն սուրբ ա-
բեանդ, և զխոնարհին Ս.ա-
ստուածատուր զլիսոյդ։ Յիշեա
կենդանիդ յաւիտենից զիմաստ-
ութն և զբարեաւ և զՅարութիւնդ
Աստուածպէս, և զՀամբարձ-
մանդ հրաշափառ։ Յիշեա յի-
շատակդ յաւիտենից՝ զկորուսեալս, քանզի փառն մեզ-
քոյդս յանձն առեր զայս ամենայն ամենազաւթդ Տէր։ Սրդ՝
զայս ամենայն ունիմք առ քեզ միջնորդ և բարեխօս, բազում-

ողորմ, ողորմեա ինձ և թող
զամենայն յանցանս իմ. արբեա
ի մեզաց. ազատեա յամենայն
վշտաց զեհենոյն. և տուր ինձ
սեղի յարքայութեան քում. զի
զու ես մարդասէր Տէր. և քեզ
վայելէ փառք իշխանութիւն և
պատիւ այժմ և միշտ և յա։



Ա. ՂՕԹՖ

ՆԱԽ ՔԱՆ ԶՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆՆ

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ քան Ի՛ Ն.

Ա. Եւ քանզի ընդ ողբաձայնից բանաստեղծութեանց վերընծայելոց զգրութիւն թուոցս յարմարեցի կայան և հեծութիւն, հառաչանք կոդկոդանք, զառնութեան լալումն և

արտասուաց երգ, զարձեալ ընկլսայց զճառ պաղատանացս խոստովանօրէն զղջականաբար զգաղտնածածուկն յայտնաբարբառ. զի անդրադարձութեամբ սկզբամբն և վերջաւորօք բառիւք, զնոյն համաձեւութիւն ի մի թախանձ նմին մաղթանաց հոգեկեցոյցն խոնարհութեան ասասնօր եղից:

Բ. Մեղայ մեծիդ բարերարութեան՝ անարգս մեղայ, մեղայ ծագմանդ ճառագայթից՝ խաւարս մեղայ, մեղայ շնորհացդ անբաւ երախտեաց՝ արդարս մեղայ, մեղայ սիրոյդ վերնամ գթութեան՝ յայտնապէս մեղայ, մեղայ ստացողիդ յոչ էութենէ՝ ստուգապէս մեղայ, մեղայ գերունակ զգոյդ զրկանաց՝ անբաւս մեղայ, մեղայ անենաց

լուսոյդ վայելման՝ նենգողս մեզայ, մեզայ ճաշակման անհաւորդ կենաց՝ բազումս մեզայ, մեզայ անհաս պարգևացդ ճրրից՝ հանապազ մեզայ, մեզայ զուարեալ մարմնոյդ Աստուծոյ՝ մահու չափ մեզայ, մեզայ պաշտելի արեան սրբարչիդ՝ խոկապէս մեզայ։ Ահա արդարև օրհնեալ է հաստատած բանի յաւադրական սրտի այսր մեզայի, ոյն սա պատուելի առանդ, անմոռաց պատուէր, հայրենեացն տուր, նախահարցն օրէն, համայնից թոշակ, անհերքելի բան, զօրաւոր պատասխանի, կենդանութեան կամուրջ, ախորժելի վերնոյն, սիրելի սրբոց, անխզելի կապ, հրաշալի բարբառ, անշրջելի պատճառ, բաղձալի ազերս, փափաքելի

սեղան, արտաքեկ հնչումն, անհնարից ճարակ, կարծրութեան վանիչ, աստուածապաշտից սահման, հեթանոսաց դիրք, վաղնջուց կանոն, քրիստոնէից հարազատ արարչութեանն յաղթող, անջրպետ հզօր, խորոց անաւոր, արուեստ բարձրութեան, խորութիւն անչափ, հիացման տեսիլ, խորհուրդ կնքեալ. ընդ որ չիք ումեք անցանել, եթէ ոչ անմբռնելի մըտաց արագման զաս ծանիցէ։ Զայն բարեպատեհ հրաշաւորական, որ ոչ յիշատակեցաւ ի վերջին դատակնիք դասուն լըքելոյ. զուցէ առ նմին խզեալ համառօտ զվրիժակն իրաւանց մահուն հասելոյ, յորմէ ընտրութիւնն ապագործ եղեալ, զահմանն յաւիտենական քակտեցէ։

Զարդ փառաց մեծութեան, որովնոյն ինքն Աստուածութիւնն պատկեալ բարգաւաճի։ Քանզի ոչ ոք զիմեալ կալաւ զեզջերաց սեզանոյ այսր սրբութեան, և ոչ առ ժամայն պրծեալ ի պատժոյ անարատ գտաւ։ Իսկ եթէ Աքար Զարմեան. և Սաւուլ Կիսեան, և Յուդա Սիմոնեան, ասելով զոյն ոչ արդարացան, ես վկայեմ իրաւամբք խոստովանեալ զայս պայմանին, զի ակամայիցն բռնադատելոց ոչ է կատարեալ սէր, ուստի և ոչ բոլանդակապէս փրկութիւն։ Իսկ ես կամաւ համբուրեմ զարձեալ կրկնելով զերջանիկ բանիդ զմկրտութեան հարազատս։

Գ. Մեզայ երախտեացդ մոռացութեան՝ վերատին մեզայ, մեզայ մարմնոյ ձեռն յոգի հարեալ՝ յիմարս մեզայ, մեզայ առ կեանսդ դրժողութեան՝ իսկ և իսկ մեզայ, մեզայ բանիդ ապաստատ առնելոյ՝ չարաչար մեզայ, մեզայ ի յօր սատակման ինձէն ստիպեալ՝ վատթարս մեզայ, մեզայ պարտականս անկենդան մահուն՝ ձաղելիս մեզայ, մեզայ անպատկառս քո բարձրութեան՝ տագնապիս մեզայ։ Վերջին ինձ կրկին աշխարհ հոգեոր՝ զի ի կորուստ և ի կործանումն ինձ երեւեցաւ, զի անդարձս վարատեցայ, զի որդիս թշնամի գրեցայ, զի ի բարձանցն երկնից ընկեցայ, զի փուշս վարուց դիզի։ Եւ ես առ սմին ողբք ազաղակի, զի անձամբ զանձն անարգեցի, զի բազին կորուսչին գտայ։

Այլ իմն կակիծ զմնգակ սրտի, զի զիս ունին առ որ չեմ, զարտաքնայարդար բաժակս անմոքեր, զբոնեալորմս զարշունակ, զսին պարծանօք պաճուճեալս, զլոյս ի մռայլ շրջեալ, զգերանակիրակնա՝ թշուառացեալ, զջանս փոռաց՝ շիջեալ, զամենայնիս յամենայնի ամենայնիրօք վնասակարս, առ տնօրինականն տէրունականս, առ յայտնութիւնն Աստուածայինը, առ երևմունն արարչագիրը, առ խոնարհութիւնն սարսափելիս, առ այն զոր տեսի աչօք իսկ իմովք, առ որ մեծ է պատասխանատուութիւնս քան առհամօրեն աւետարանի զարմանս, հիացմունս, հոգս հայրական, անպաճմունս անհընարաւորս, թուականութիւնս

մոայ անբարգելիս, ելմուտանկատարս, իջմուտանհատուսս, յուսահատութիւնս յարմարականս, յանդիմանութիւնս պատշաճականս, ճաղանս պատեհագոյնս, նզովս իրաւացիս, անէծքս արժանաւորագոյնս։ Արդ այսոքիկ են մեզաւորիս իմ կըշտամբութիւնք, և ինքնահարուած տանջանաւորութիւն։

Դ. Եւ քանզի կարող ես զայս ամենայն զպարտս թողուլ, և զխայթուածս մահու բժշկել, Տէր ողորմութեանց, Աստուած բոլորից, Քրիստոս թագաւոր բարձրեալ Հօր Որդի, ստեղծիչ զթած բարերար, օրհնեալ առատ հարուստ, տնաւոր հզօր ողորմած, տեսուչ ճշմարիտ հատուցիչ, ապրեցուցիչ զարմանիչ կեցուցիչ. երկայնամիտ անո-

խակալ ապաւէն, բժիշկ գտ-
ուեալ երկնաւոր, անճառ լոյս
կեանք, յարութիւն նորոգու-
թիւն քաւութիւն. եթէ հայեա-
ցես մարգարէութեամբ, ըստ
որում քոյդ են սովորութիւնք,
նայեցեալ ի քեզ կողկոզիմ և
ես. եթէ լուիցես, հառաչեմ.
եթէ ունկնդրացուցանիցես, պա-
զարիմ. եթէ անտայցես, ազերս-
եմ. եթէ ներեցես, աղաչեմ.
եթէ առիս զառնայցես, գոչեմ։
Ապա եթէ անտես առնիցես,
կործանիմ. իսկ եթէ առ ոտն
հարկանիցես, լամ. եթէ զոզե-
պարն ոչ ընծայեցես, մեռա-
նիմ. ապա եթէ անարկու զէմս
ցուցանիցես, սատակիմ. իսկ
եթէ սատակցես, զոզամ. եթէ
խեթիւ տեսանես, տակամ. ապա
եթէ սատակնես, տրտմիմ.

եթէ հալածես, հեծեմ. իսկ եթէ
ընդ վայր հարկանիցես, հեր-
քիմ եթէ զոզբոց վհատութիւ-
նըս ոչ առցես, տագնապիմ. ե-
թէ խստանաս, փախնում, ա-
պա եթէ սպառնաս, ընկճիմ։
Իսկ եթէ քննես, քարկոծիմ.
ապա եթէ ուժգինս ակնարկես,
սուզանիմ. եթէ ոչ անխայեա-
ցես, մերժիմ. եթէ կոչեսցես,
խիթամ. իսկ եթէ ուշս յառեա-
ցես, աղաչեմ. եթէ ձայն տա-
ցես, երկնչիմ։ Զբարեացն պարգև
մոռանել, զերանութիւնն
թոզեալ, զշնորհն լքեալ, զուխ-
տն ցրեալ, զաւանդն կենաց
մոռացեալ, զհամարձակութեան-
ն վստահութիւն կորուսեալ,
զառեզծիչդ էիցս բարկացու-
ցեալ, զանճառութիւն շնորհն
ընդոստեալ, զպատուոյն պատկեր

այլայլեալ։ Իսկ եթէ առ այս խեղդ մահու հեծութեան ցաւոյ մարդասիրեալ՝ առ իս ժամանեցուցցես, Տէր Յիսուս Քրիստոս զազդեալն զիր ընանիլ ի յիս, եթէ բժշկութիւնդ ազատարեցուցանէ զմեզս մեծամեծս, որով ամենառատ քաղցրութեամբ պատուաստեալ ի քեզ, զքոյդ կերպարան լուսոյ նկարեալ յոգի՝ վերատին գտեալ պնդեցայց քաւեալ, և ստեղծեալ կրկին ի փրկութիւն անմահից կենացն անախտականաց. և քեզ ընդ Հօր հոգւովդ սրբով փառք յաւիտեանս. ամէն։



ԱՂՕԹՔ

ՑԱՏ ՀԱԳՈՐԴՈՒԹԵԱՆ

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ քաւն Ե.

Ա. Եւ արդեսն երկրածինս մարդ՝ կենցաղականաւ անկայուն գոյիւ զբաղեալ, և յիմարութեամբ պատրողականաւ զինեալս յիմարեալ, որ ամենայնիւ առեմ

և ոչ միով խիթ ճշմարտեմ։ Քանզի որոնք դիմօք վերապրեցելովք նշանակօք ազարտեցելովք՝ յանդգնեցայց լինել յանդիման քում դատաւորին, ով իրաւագոյն տիրաւոր, անճառ, անպատում հզօր, Աստուած բոլորից։ Քանզի դատեալ ատրպատին ի սոյն զապերախտութիւն մեզուցեալ անձինս առ քումդ երախտիս, ցուցից զիրաւունս քո միշտ զօրացեալ և զանխրատութիւնս իմ յաւէտ պարտաւորեալ։ Որ տրարեր զիս ի քո պատկեր պանծալի՝ ի ձեռն վեհիդ տպաւորութեան ; զարքիսրս օժանդակելով։

Բ. Զարդարեցեր բանիւ, փայլեցուցեր փշմամբ, մտօք ճախացուցեր, խմաստիւք ամենացեր, հանճարով հաստատեցեր, ի շնչականացն որոշեցեր, հոգւով իմանալեաւ խառնեցեր, իշխանականին քոյիւ պճնեցեր, ծնաւ հայրաբար, անուցեր զամենայնիսկ, տածեր ատացողապէս, անկեցեր զամբարիշտս ի քումդ գաւդի, ջրովն կենաց ոռոգեցեր, աւազանին ցօղով մաքրեցեր, կենացն վտակաւ արմատացուցեր, հացիւդ երկնայնով ջամբեցեր, Աստուածային արեամբդ արբուցեր, անհպիցն և անհատանելեացն ընտանեցուցեր, զաչս երկրեղէն ի քեզ համարձակեցեր, լուսով փառաց վերածածկեցեր, զհոգանիւթ մատունս անմաքուր ձեռացս ի քեզ մատուցեր, զմոխիրս անարգ մահացու՝ իբր զնշոյլ լուսոյ յարկեցեր, զՀայր քո հզօր ահաւոր օրհնեալ՝ մարդասիրա-

պէս և անարժանիս իմոյ անձին կենքեցեր, Ոչ կիզեր զբանս լեալ նաներութեամբ ժառանգակիցն կարդալ զքեզ Ոչ կշտամբեցեր զյանդգնեալ ի քո կոյրութիւն, ոչ ատեցուցեր զտեսիլ աչացս ի քոմբոգ ակնարկութիւն, ոչ արգելանաւ կապանաց ընդ մահապարտացն տարագրեցեր, ոչ խորտակեցեր զգաւտակ բազկիս՝ որ անմաքրապէս առ քեզ համբառնայր, ոչ մոռներեցեր զոտս իմոց մատանցս ի չօշափելի զբանդ կենաց, ոչ պատեցին զինեւ մատախուզք ի ձօնելն զքեզ անուր, ոչ փշրեցեր զպարս ատամանցս յըմբոշխանելն զքեզ անսահմանելի, ոչ գնացեր բարկութեամբ խստարնակ՝ խոտորնակի ընդ քեզ հետևողս

Բոլոր ընդ վրիպեալ տունն Իսրայելի, ոչ խայտառակեցեր ի խարանարանիդ զանարժանս քումբդ պարերգութեան, ոչ ի զբաւձ հանդերձին տեսիլ զանօրինեալս յանդիմանեցեր, ոչ կապանօք ձեռացս և ոտից յարտաքին խաւարն հալածեցեր։

Զ. Զայս ամենայն մատնս բարեաց և զնեբելոյդ երկայնմբտութիւն ընկալեալ ի քէն՝ բարերար, օրհնեալ և յամենայնի միշտ երկայնամիտ, վոխարէելի վնասակարս պարտեաց՝ անթիւս և բազմօրինակ անօրէնութիւնս, մարմնականաց և անձնականաց՝ ամենակիր բազմածուփ խորհրդոց յուզմանց երկրաքարշութեանց։ Զայսոսիկ քեզ, Սատուած իմ և Տէր, ընդ այսքանեաց բարեաց վոխարէ-

բեցի. զայս քեզ ինձէն հատուցի չարիս, ըստ Մովսիսեան յանդիմանութեանն տուակի, մուացեալ զիմաստութիւն և սիրոզս յիմարութեան։ Զայսց բարեաց երախտեաց կաճառս՝ ընդունայնութեան գնացիւք՝ չարաչար ունայնացուցի. զայս լուսաւորութիւն շնորհաց անճառիւք ի բարձրելոյդ խնամոց բարձեցեալ՝ մրրկուն խելացաւորութեան ցնորեցի։ Եւ թէպէտ բազում անգամ ծանուցեր կարկառումբ ձեռին քո այցելութեան ձգել զիս առ քեզ, ոչ հաւանեցայ ըստ մարգարէին որ զԽարայելէ ամբաստանութեան և թէպէտ խոստացայ դաշնաւորեցի քեզ հաճոյանալ, և ոչ ընդայամ սահմանուս ուխտիս փակեցայ, այլ դարձեալ զնոյն նիւթեցի։

ցիչարիս, անդատին յոճն առաջին մատեայ, փշոցն մեզաց հերկեցի զանդաստան արտիս յորմանն արդիւնաւորութիւն։ Առիս եանեն առաձք Աստուածարեալ սուրբ մարգարէիցն. քանզի մընացեր յինէն խախտեալ, և ես ընդ այնորիկ փուշ շառաւիղեցի. դարձայ յանխորժ զառնութիւն պտղոյ՝ այգիս օտարացեալ. բուռն հարի զանհաստատ հոգմոյ որովք միշ տատանեալ այսր անդր տարուբերիմ. ըստ ձայնի երանելոյն Յոբայ ընդ ճանապարհ իմն անդարձ գնացի ի վերայ աւազոյ շինուածս յիմարութեան կառուցի։ Այնաւարր հեռովք խաբեցայ կենացն անձկալեաց հասանել. փակեցի ինձէն զելիցն ողորմութիւն. բացի կամաւ զկորբ-

տեան խորխորատն։ Ոչ զպատուհան լսելեացս իմոց առբանիլ կենաց ընդունելութիւն. կափուցի զաչաց հոգւոյս հայեցուած առ ի զկենացն զեզ նկատել։ Ոչ ընդ ոտեայ ի թմբրութեանց լքմանէ մթացս ի պատգամ փոզոյդ անուտրութեան. ոչ զգաստացայ ի բոզոք գուժի հրատարձակեան աւուրն ընտրութեան. ոչ երբէք զարթեայ ի նիրհմանէ քնոյն մահացուի, որ ի կորուստն կարապետէ։ Ոչ եւս հանգիստ քո հոգւոյդ իմարմնեղէնս տուղաւարի. ոչ ընդ բընութիւն շնչոյս խառնեցի զմասն շնորհաց քումդ պարգևի. իմոյս ձեռօք կոչեցի կորուստ, ըստ առակողին, զհոգիս կենդանի մահացուցանել։

Դ. Եւ զինչ է ինձ տակաւ և

նուազուցոյնս յոտել սահմանս կսկծելիս չափաբերակեանս, մինչ անցեալ է ըստ քանակութիւն և. վրիպեալ ըստ բժշկութիւն, Արդ քո է ընձեռել կեանս հոգւով մեռելոյս, և անոխակալութեամբ մատչել առ այցելութիւն գատապարտելոյս Որդի Աստուծոյ կենդանւոյ. քեզ փառք յաւիտենից. ամէն։





ԱՂՕԹՔ

ԱՌ ՀԱՅՐՆ ԱՍՏՈՒԱԾ

Փառք քեզ Աստուած Հայր ամենակալ՝ հզօր և ամենայնի կարող, որ միայնդ ես և ամենեցուն օգնես երկնաւորաց և երկրաւորաց. և առատապէս լնուս զպէտս ամենեցուն: Տուր մեզ Տէր աղաչեմք զքեզ՝ յաղթել չարին. և մի՛ տար զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա յաներեւոյթ գազանէն վասն անուանդ քումդ սրբոյ:

ԱՂՕԹՔ

Ի ԴԷՄՍ ՈՐԴՒՈՅ

Օրհնութիւն քեզ Որդի Աստուծոյ Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ որ յայց եկեր մեզ, և եկիր ի փրկել զարածս քո. գթած և

մարդասէր Տէր՝ զքո սուրբ տը նօրէնութիւնդ առ քեզ բարեխօս ունիմք, զոր կամաւորութեամբ յանձնառեր: Զծնունդն, զՄկրտութիւնն, զԽաչելութիւնն, զԹաղումնն, զՅարութիւնն, և զԱստուածապէս Համբարձումնն. մի անտես առներ զմեզ, զոր գնեցեր պատուական Սրեամբդ քով սրբով,

ԱՂՕԹՔ

Ի ԴԷՄՍ ՍՈՒՐԲ ՀՈԳՒՈՅՆ

Գոհութիւն մատուցանեմք քեզ սուրբ Հոգի Աստուած ճշմարիտ՝ արեգակն արդարութեան, որ ծնար զմեզ վերատին յարգանդէ սուրբ աւազանին՝ յորդէգրու-

թիւն Հօրն երկնաւորի Ծագեա ի սիրտ մեր և լուսաւորեալ ջերեայր զհոգիս մեր ի սէր սրբութեան վաստակիլ ի փրկութիւն անձանց մերոց, ի պատիւ և յերկրպագութիւն սուրբ Երրորդութեանդ և մի Աստուածութեանդ. այժմ և միշտ և ։

ԱՂՕԹՔ

ԱՌ ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ

Աստուած Աստուած իմ՝ որ քընեաս զսիրտս և զերիզամունս. հայեաց յերկնից ի սրբութենէ քումմէ, և տես զտարակուսեալ անձն եղկելւոյս. ի յանցա-

նաց ազատեա զպարտաւորս, և իմեզաց մաքրզս զբազմամեղս։ Մի ընկենուր զիս յերեսաց քոց Տէր. եւ մի ընդ վայր հարկաներ զիս վասն մեղաց իմոց։ Ապաչեմ զքեզ Տէր՝ զօր վախճանին իմոյ ի պատշաճի տրա, և զհրեշտակ խաղաղութեան առաքեա առ ծառայս քո։

Զհոգեվարքն իմ թեթեւ արա, և զհոգիս իմ խաղաղութեամբ անցո ընդ չարութիւն ոյսոցն՝ որք են ի ներքոյ երկնից. խաւարեցին աչք նոցա զի մի տեսցեն, և զչարութիւն նոցա կործանեա. սատակ սատիս քո Տէր սպառեցին, սպառնալիք նոցա ըմբռնեցին։

Զարհուրանք նոցա ընկրկեցին. գնացք նոցա ըմբռնեցին. բրնութիւնք նոցա խափանեցին.

չար խորհուրդք նոցա տոչնրեա-
ցին. տարաւիք նոցա ջարդեա-
ցին. ջոլիրք նոցա կռբահարեա-
ցին. կռիւք նոցա ջնջեացին.
ջանք նոցա և բանակք բեկցին:
Զօրքն զարհուրեացին. շըշընջ
մունքն շիջցին. պատերազմուն-
քըն պարտեացին. յարձակմուն-
քըն արձանացին. զէնքն խոր-
տակեացին. աղաղակքն աղար-
տեացին. մեքենայքն մանրեա-
ցին. սպառազէնքն սպառեացին.
ցամուանքն ցածացին. մեկնա-
զէնքն մորմոքեացին:
Ամբարտաւանութիւնքն ամա-
չեացեն. քաջքն քամահեացին.
լրբութիւնքն լկեացին, և մի-
անգամայն ամենայն միաբանու-
թիւնք նոցա ի սկզբանէ քակ-
տեացին. զի միառաւորեցից զա-
մենազօր Տէրութիւնդ այժմ։



ԱՂՕԹՔ

ԱՌՍՈՒՐԲԱՆԱՉՆ ԳՐԻՍՏՈՍԻ

Տէր Յիսուս Քրիստոս՝ նշանի
Խաչի քո երկիրպագանեմ, և ա-
ղաչեմ վասն զօրութեան քոյ՝
զոր գործեցեր ի սմա. զնոգի և
զմարմին իմ ի մեղաց և յամե-
նայն չարեաց պահեա. ի խոր-
տորմանց եւ ի նենգութեանց

թշնամոյն փրկեա, և արժանաւորեա յաւիտենական ուրախութեանցն արժանապէս։

Փրկիչ աշխարհի՝ մի թողուր զիս. զի դու իսկ արժանաւորեցեր ելեալ քո ի Խաչ վասն իմ. հովանաւորեա և փրկեացես յաւուր նեղութեան։ Սուրբ Խաչ Քրիստոսի՝ որ քեզ փրկեալ եմ, քեզ լիցի թողութիւն և քաւութիւն մեղաց իմոց։ Սուրբ Խաչ՝ ապրեցո զիս վասն նորա որ կախեցաւ զքէն։ Սուրբ Խաչ՝ պահեա զիս վասն նորա որ զգեցաւ մարմին և չարչարեցաւ ի քեզ։ Փրկիչ Տէր՝ փրկեա զիս վասն զօրութեան Խաչի քոյ. և յամենայն չարեաց պարապեա։ Խաչ քո Տէր Յիսուս՝ զոր ես երկիրպագանեմ, եղիցի ինձ ի փրկութիւն, կեանք, զէն յաղթութեան, և օգնականութիւն այժմ և ի հանդերձեալն. և քեզ փառք յաւիտեան։

ԱՂՕԹՔ

ԱՌ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՆ

Ով ամենասքանչելի Աստուածածին պարծանք կուսութեան,

ճրագ պայծառագոյն քան զարեգակն։ Ով ջահ փայլուն քան ըզլուսին և զաստեղս։ Ով աթոռ քրովբէական բարձրագոյն քան զերկինս։ Ով սերովբէ հողեղէն վեհագոյն քան զհրեշտակս, և պատուականագոյն քան զանմարմին դասս երկնաւորաց։ Ով պարծանք կուսանաց և փառք ամուսնացելոց։

Դու ես հարսն անակզբնականին, զու ես մայր մարմնացելոյ միածնի Որդւոյն Աստուծոյ. զու ես բնակարան Հոգւոյն սրբոյ։ Քեզ հաճեցաւ Աստուած ընդ մարդկային բնութիւնս՝ որ մեզաւ. քեզ բացաւ փակեալ դուռն դրախտին։ Քեզ օրհնեցաւ երկիր յանիծից նախահօրն. քեզ տնկեցաւ քաղցրութիւն և ճըշմարտութիւն երկրի։

Քեզ ծանեաք զԱստուած, քեզ անուանեցաք Քրիստոնեայ. քեզ ընկալաք զապաշխարութիւն ի թողութիւն մեզաց։ Քեզ միայն տուաւ համարձակութիւն բարեխօսել վասն ազգի մարդկան։ Ով որովայն աստուածակրող Մայր աստուածածնող։ Աստուածաշնչարան. Աստուածահանգիստ գիրկք. Աստուածազիաց ստինք. Աստուածաբարձ բազուկք. Աստուածամերձ բերան. Աստուածահամբոյր շրթունք. Աստուածահայեաց աչք. Աստուածախօս լեզու. Աստուածընկալ խորան. Աստուածաբնակ տաճար։

Մի մոռանար զխոստովանողս քո, որ քեզ փառաւորեն զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին՝ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտեան։

ԱՂՕԹՔ

Ս. ՌԻ ԵՐԵՆԵՍՆԵՑՈՆ ՋՕՐՍՆ

Սուրբ և սիրելի՛ Յամենասուրբ Երրորդութիւնդ, հոգիք հարկաւորք, Գաբրիէլ, Միքայէլ, Ուրիէլ, Ռափայէլ, Հրեշտակք, Հրեշտակապետք, Պետութիւնք, Իշխանութիւնք, Տէրութիւնք, Սէրովբէք, Քերովբէք, Աթոռք, Հրեղենք, Բոյսեղէնք, Լուսեղէնք, և այլ ամենայն զտակարգութիւնք Երկնաւորք, որոց առաջի անկանիմ և զարդարողին ձերոյ Տեառն Աստուծոյ երկիրպագանեմ. և խնդրեմ ի ձէնջ հայցել ի Տեառնէ զթողութիւն յանցանաց և զքաւութիւն մեղաց իմոց. քանզի ձեզ տուեալ է հա-

մարձակութիւն վասն բարեխօսութեան ամենայն մեղաւորաց։ Դուք սուրբ էք՝ և առ ամենասուրբն մօտակայք. դուք անմարմինք էք և անմեղանչականք, իսկ ես մարմնաւոր եմ և մեղանչական. դու անմահ և ի լոյս բնակեալ, իսկ ես մահկանացու և խաւարաւ մեղաց ծածկեալ. դուք թեթեւ ընթացք և քան զմիտս երագունք, իսկ ես ծանրացեալ մեղօք և զառածեալ յանցանօք։ Վասնորոյ՝ աղաչեմ զձեզ աղաչեցէք վասն իմ զՏէր և հայցեցէք զթողութիւն բազում յանցանացս, քանզի յօժար է ի փրկութիւն կորուսելոյս. մի անիծոյթ առնիցէք զինդիր տարակուսելոյս, այլ միաւորեալ զաղաչանս մեղուցելոյս ընդ ձեր

ամենամաքուր մաղթանացդ՝ մատուցէք խնդրողին զկորուստեալս, զի փրկութեամբս իմով ուրախութիւն արասցէ ձեզ Տէր ի յերկինսդ. և ես ձեր միջնորդութեամբ սրբեցայց ի մեղաց և ազատեալ յամենայն յանցանաց՝ փառաւորեցից ընդ ձեզ ամենասուրբ Երրորդութիւնն զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգի. այժմ և միշտ և յաւիտ.

ԱՂՕԹ

Մեր Տայ վարդապետին վասն ճանապարհի։

Առաջնորդ կենաց ճանապարհ ճշմարտութեան Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ առաջնորդեցեր Յովսեփու յԵգիպտոս, և իսրայելայուցն ընդ ծովն կարմիր, և Մովսիսի ի լեառն Սինէական, և ժողովրդեանն յերկիրն պարգեւաց, և կղէոպեանցն ճանապարհակից եղեր Յեմաւուս, Աղաչեմ զքեզ Տէր՝ առաջնոր-

դեա ինձ և եղբարց իմոց գը-
նալ խաղաղութեամբ զառաջի-
կայ ընթացս, փրկեա յերևելի
և յաներևոյթ թշնամւոյ. և
բարի առաջնորդեա ի դէմ ե-
դեալ տեղին. զի դու ես ճանա-
պարհ եւ ճշմարտութիւն եւ
կեանք մեր, այժմ և միշտ և
յաւիտեանս. ամէն։

ԱՂՕԹՔ

Ցորժամ յորդայք անկանի ոք
ասացեալ է արքոյն Գրիգորի մե-
ռոյ Լուսաւորչին։

Օրհնեալ է մարդասիրութիւ-
նդ քո Տէր իմ և փրկիչ Յիսուս
Քրիստոս, ընդէր լքանես զիս.
դու միայն ես առանց մեզաց. և
անուն քո զանոխակալութիւն,
և զմարդասիրութիւն ցուցանէ.
գթա յիս՝ վասն զի դու ես մի-
այն մարդասէր։ Ապրեցո զիս
զանկեալս ի մեզս. զի դու ես
միայն առանց մեզաց։ Հան զիս
ի տղմոյ անօրէնութեան իմոյ,
զի մի ընկղմեցայց յաւիտեանս
յաւիտենից։ Փրկեա զիս ի թըշ-
նամեաց իմոց. քանզի տնա իբ-
րեւ զառիւծ զոչէ և մռնչէ կա-

մելով կլանել զիս։ Արդ Տէր իմ
փայլատակեա զփայլատակունս
քո և կոթծանեա զզօրութիւն
նոցա. երկիցեն և խաւարեսցին յերեսաց քոց. քանզի անկար է և ոչ ունի զօրութիւն
կալ առաջի քո, և ոչ առաջի
երեսաց սիրողաց քոց։ Տեսանէ
զզօրութիւն նշանի Խաչի քո
Տէր՝ և զարհուրի. և ամաչելով
ի բաց հեռանայ յայնցանէ՝
որք կարդան առ քեզ։ Այժմ
Տէր կեցո և ապրեցո զիս, վասն զի ի քեզ ապաւինեցայ.
հան ի նեղութենէ զանձն իմ,
զի մի իսպառ կորուսցէ զիս
նենգաւորն՝ որ մարտնչի ընդիս
ծածուկ հնարիւք։ Որ խորհողդ
ես Տէր, և քննես զսիրտս
և զերիկամունս, որբեա ըզ
սիրտ իմ և զխորհուրդս ի զա-

զիր և ի պիղծ խորհրդոց. զի
մի իսպառ կորեայց ի յաւիտեանական կորուստն։ Որ կարողդ
ես ամենայնի, ողորմեա ինձ
Աստուած իմ. տուր շնորհ արտասուաց մեղուցեալ հոգւոյս,
որպէս զի լուայցի զբազմութիւն մեղաց. զի ապրեցայց ի
ձեռաց անողորմ հրեշտակաց՝
որ արկանեն զամբարիշտն ի
հուր գեհենին. երանի թէ լայի
հանապազ աղաչելով զքեզ Աստուած, զի մի՛ անարժան գտայց
ի ժամուն յորժամ գայցես. և
մի՛ լուայց զահաւոր զձայնն
զայն, թէ Երթ ի բաց մշակդ անիրաւութեան ոչ գիտեմ ուստի
ես, Աստուած բարձրեալ միայն
առանց մեզաց, շնորհեա ինձ
մեղաւորիս յաւուր յայնմիկ ըզ
բազում գթութիւն քո, զի մի՛

յայտնեացին ծածուկ ամբարբշ-
տութիւնք իմ առաջի տեսողաց
Հրեշտակաց և Հրեշտակապե-
տաց։ Մարգարէից՝ Առաքելոց
և արդարաց սրբոց։ Այլ ապ-
բեցոզիս զամբարիշտս շնորհօք
ողորմութեան քոյ. ընկալ զիս
ի դրախտն փափկութեան ընդ
կատարեալ արդարան. ընկալ
զաղօթս մեղուցեալ ծառայիս
քոյ բարեխօսութեամբ սրբոցն
որք հաճոյ եղեն քեզ, Յիսուս
Քրիստոս Տէրդ մեր. և քեզ
ընդ Հօր և սուրբ Հոգւոյդ փառք
յաւիտեանս յաւիտենից ամէն։

Վասն կապանաց թիւաց եւ կախարզաց աղանդաւորաց։

Թագաւոր հզօր ապաւէն ծարաւելոց՝ փրկիչ նեղելոց՝ որ վասն մեր խոնարհեցար ի հայրական ծոցոյ և առեր մարմին ի սրբոյ կուսէն Մարիամայ. վասն մեր սրոյ փրկութեան մատնեցար, ըմբռնեցար, չարչարեցար, խաչեցար, թաղեցար՝ և յարեար ի մեռելոց՝ և համբարձար փառօք առ հայր։ Զարթո զզօրութիւն քո և եկ ի կեցուցանել զգինս արեան քո Տէր. և մի՛ տար զերեւաստանայի զքո փրկեալքս, և մի՛ տար բնակութիւն չարին՝ զտաճար անուանդ քում սրբոյ. այլ գթա ի քո ա-

բարեածս արարչական սիրով քո, և ողորմեա մեզ. զի ի Սաչ քո պարծելով պարծեցաք. և փրկեա զմեզ յաներևոյթ չար ղըժընդակ դիւաց, և ի խաբեբայ եղեռնական գործոց կախարդաց. և քեզ փառք յաւիտեանըս. ամէն։

Չար իշխանքըն հալածին,
Որք ընդ ծառայս քո մարտնչին.
Երեւելով նշան Սաչին,
Անհերեւոյթքն կործանեսցին։

Իքանից արքոյն Գրիգորի Նարեկացւոյ ընդդիմամարտ դիւաց այս նուազ աղօթից եւ դիւաստարուն չերմնուազնապ ախտաւորութեանց Աստուծով փարատիչ։

ՌԱՆ ԻԸ.

Ե. Արդ այս քանեացս անբաւիցս հրաշից հանդերձիչ Հայր ամենատեղծ՝ անունդ ահաւոր, ձայն սարսափելի, կոչումն ընտանի, բան համբուրելի, ազգումընդքանչելի, հրամանատակալի, էութիւն անքննելի, գոյութիւն անճառելի, իսկութիւն անբաժելի, զօրութիւն անզննելի, կամքամենաբարի, տէրութիւն անսահմանելի, մեծութիւն անչափելի, բարձրութիւն անվանդակելի, որքանութիւն անկըշռելի, առատութիւն անհատանելի, պատճառորդոյ հայ-

րութեամբ, այլ ոչ նախագրութեամբ. քեզ, և ի ձեռն քոյդ անպարագիր զօրութեանդ ասատեա տագնապող և դիւական տենդիս ջերմութեան, որ սպրդեալ մուծաւ ընդ մեզաց, զի փախիցէ ի մարդոյս զարհուրեալ ի սխրալի և յանբաւելի արեանվտակի գառինդ երկնաւորի, որով սրսկեալ միանգամ ի մշտնջենաւորս համայն մաքրեցաք։

Զ. Եւ արդ յայսց պատկառելի խոնարհութենէ արարչակերտս խորհրդոյ, ամաչեսցէ սատանայ ի գործս չարեաց իւրոցն հրեշտակաց, տանջեսցի և հալածեսցի, հեռացեալ և արտաքս առաքեալ ի շինուածոյ խորանէ քումդ բնակութեան յարտաքին խաւարն։ Եւ ջնջեալ մաքրեա զարտասուս ոգբոցս ի դիմաց մերոց, և զհառաչումն ձայնիս հեծութեան իսրտից մերոց։ Եւ յիշատակաւ հարման հեզուսիցն քառմնափուշատաժանատեսիլ ոգեպահանջից, որով պնդեցաւ միածինդ քո յաշտարակ

Խաչին, ցաւեսցի չարին։

Եւ ի կողահերձ սայրատուր սրլաքէ ուժգին բախմանէ, որով զվէրն մեծ ընկալաւ, ի սպառ սատակեսցի սկզբնարար մահուն։ Եւ զի խոնարհեցոյց զգովեալն գլուխ յաւանդել զոգին ի ծոց քո բարձրեալ, ապստամբութիւն անբարի բարուցն Բելիարայ ի կոր կործանեսցի, ամենայնիւ հերքեալ ի կորուստ։ Եւ զի զօղեալ ծածկեցաւ անմահն իսկութիւն յորովայն ի երկրի, այսու ամբարձեալն հպար-

տութիւն կարծեալ գոռոզին ի յատակս մահու դժոխոց մթին ատուերին յառեալ դիտեսցէ. և յիշեսցէ զառաջին հարուածն անբժշկական, որով մահացու դիմամարտութիւն թիւնից վիշապին կենարարն կրիւք ամենազօրին։ Վասն զի ի փառս քո, Հայր ողորմութեան, իբր ի գովեստ Որդւոյ քո Հոգւովդ սրբով զայս խոստովանիմ. քանզի ոչ պիտակ ինչ ասակ գօրութեանն ունի զմիւսմէնառ մի խորհրդականն խորութեան, այլ զանբակիզբն բանդ անճնաւոր ընդ անժամանակդ Հօր փառաւորեմք։ Եւ քեզ միայնոյ սուրբ Երրորդութեանդ, հաւատարապատիւ տէրութեանդ, համաբուն անբաժին ինքնութեանդ օրհնաբանութիւն, գոհութիւն, գօրե-

ղութիւն և անճառ վայելչութիւն մեծութեան, բարեվիճակ հարթութեան, զուգակշիռ հաստատութեան յաւիտեանս. ամէն։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ բան Ղ.

Ա. Բարերանեալ Աստուած երկնաւոր, միայն արարիչ, Տէր ամենակալ, մեծութիւն ահեղ, գթութիւն օրհնաբանելի, ողորմութիւն խոստովանելի, բարերարութիւն երկրպագելի, խնամակալութիւն պաշտելի, մարգասիրութիւն տօնելի. պահպանութիւն խնկելի, քարձրեալ անքննին, մերձաւոր կամարար, ապաւէն անկասկածելի, մխիթար սրտից, փարատիչ վշտաց,

ապաքինիչ ցաւոց, ապառումն վնասուածեանց, բարձումն պարտեաց, փոխարկիչ կարեաց, կարգաւորիչ կրից, յարմարիչ բանից, սանձարկու լեզուի, շըրջադրութիւն շնչոյ, կացուցիչ հազագի, ամփոփիչ խորհրդոց, կրթարան կամաց, արձանացուցիչ յուզմանց, հանդարտութիւն մրրկաց, խաղաղութիւն ծփանաց, որ ունիս զթեւոց ամենընթաց իշխանականիս, և իմաստութեամբ նուաճեալ առ քեզ դարձուցանես։

Բ. Գոնաբանեալ միշտ երախտաւոր, որ հեզութեամբ անհըպարտութեան երկայնամտեալ հանգչիս տենջանօք անճառ հըրաշիւք յանձինս սրբոց։ Թագաւոր էիր համայնից, ամենայնիւ ծանուցեալ գթած. սկզբ-

նահայր և նախաշաւիղ սիրոյն ընթացից. ճանապարհ կենաց, որ առաջնորդես քաղցրութեամբ դիմելոյս ի լոյսդ վերին։ Զերընկալու մեծ վստահութեան, որոչ թողացուցանես գայթակղելոյս ի վայր կործանել. յուսոյ կերպարան, ճշմարիտ առհաւատչէիս ազատչողաց մատանց յայտնի երևեալ. ապաւինութիւն հանգստեան, որ ոչ երբէք մատնես փոանգի դատապարտութեան։ Ազատութիւն շնորհաձիր, որ տաս լիապէս առանց փոխատրութեան փրկանայ. առատութիւն աննախանձելի, որ քոյին փառաւորութեամբ զանարգ նիւթ հոգոյս ճոխացուցանես։ Պայծառութիւն անստուեր, որ ճառագայթիւք ահեղբարձրութեան պարածած-

կեալ զթշուառս՝ կրկին բարգաւաճ առնեաս։ Քաւիչ մեզանաց բազմաց, որ զհերքեալս ի փրկութենէ առաջնումն պայծառութեամբ նորոգեալ՝ վերստին վայելչայուցանեաս։ Հնարաւոր դիւրահաս առ ամենայն անբաւ գերամբարձութիւն յաւէտ յառաջեալ, ելք վաստակութեան առ խոստացելոցն վայելս։ Երանութիւն անձկալի, յոր զկենդանութիւն շնչոյս լքանելն է ախորժելի, զի զքեզ գտից՝ կենդանի։ Կամք անփոխադրելի առ ի քաւութիւն գերուոյս զօրացեալ ամենագովելի, անխաբելի զեզ կենաց, որ և մեռելոց բընաւին եզծելոց առնես զարքանչելիս։ Ամենատեղծ աներկբայելի, որ զհուրբ կիզեալն և զհողմով հոսեալ և զժանեօք

գազանաց ծախեալն ի քթթել ակն նուիրն հիւթականութեամբ անպակաս յարուցանես։ Անհաւասար համարձակութիւն, յորում Աստուածօրէն պանծանօք պարծելն է իրաւացի։

Գ. Հայեաց, Տէր, յերկնից զբարի քաղցրութեամբ յամենակործան վտանգ նեզելոյս, և արա անդորր հանգստական դիւրաւոր ի բազմատագնապս հեծութենէ։ Եւ զյարուցեալ գուժարս սատակչացն, եթէ սպառազէնք այսական զժնեայ հընարաւորութեան բուռն մարտակցաց պատկանեալ զինուք, եթէ մեզաց տգեղ և քո ատելի կերպարանք, եթէ ցաւոց և ախտից վատնիչ և կորստական նշմարանք, մերժեացես հանցես հատցես խափանեացես և հա-

լածնայեալս հեռի սահմանաւ ի
սպառ տարածելոյ անդարձ ո-
րոշմամբ վերատին կորստեանն.
և կառուցեալս կացուցեալս նը-
պաստակ կենաց և ամուր մա-
հարձան զնշան Աստուծոյ ապաւի-
ներելոյս ի քեզ փրկութիւն։ Եւ
յայսմ անպարտ և անպատիր
և անվանելի արուեստից տհա-
տորիդ մեծութեան լուծցին ո-
րոգայթն գաղտնածածուկ սա-
տանայականք, կապուեցին մե-
քենայքն, վանեցին զայթակ-
ղութիւնքն, խայտառակեցին
հաղբիցն դրութիւնք, յայտնե-
ցին երեւոյթք որսոյն, զոցին
նենգողին ծուղակք, վերացին
վարմին վերարկուք, տոչորեա-
ցին որոմանցն բոյսք, նգովեա-
ցին բռնաւորին չարաբանու-
թիւնք, կարեցի լար խաբէու-

թեան ի մահ որսողին, պար-
ուսցին պարտողին բանսարկու-
թիւնք, պակասեցին զէնք
զրպարտողին, անկցին սուսերք
մահարերին, սուզեցին սապ-
րողին պատրաստութիւնք, ար-
ձակեցին տոռունք տագնապո-
ղին։ Այլայլեցին սուտ կերպա-
րանք կեղծաւորին, սատակե-
ցին խրոխտականացն խիստ
յարձակմունք, ցրուեցին կցոր-
դութիւնք կերշայն, բաժանեա-
ցին ազինք ուսզակացն, քայ-
քայեցին բոյլք բարբարոսացն,
քանդեցին ամրոցք ապստամ-
բողացն, արգելցին ամպրոպք
յանդգնելոցն, փարատեցին
փորձողին անձրևք, հալեցի և
ցամաքեցի եղեամն ազանդա-
ւորին։ Խորտակեցի եղջիւր
գոռոզին, մանրեցին ամբաս-

նալիք գրոշիցն կերպարանաց, փշրեցինամբարնուաճութիւնք հպարտացելոցն, նահանջեցին դիմեցմունք ճակատելոցն, քակտեցին միաբանութիւնք զօրացըն Բելիարայ՝ թէ անմարմինք և թէ մարմնաւորք, փախիցեն ընդ նոյն ճանապարհ ի մի շաւղաց հետոց յեօթն տարակոյս. ի գուբն ինձ փորեալ ինքեանք ընկճեցին Յեզաբելեցին, ձըմերունք ձանձրացուցչին, հացի կապն կցորդութեան մչուճան աւազակին, նողկացի մըտացս կայից համբոյր շողոքորթին, ընդ միջեալ մեկնեցին նեռաձգութիւնք նեղչին, կացցէ ի սատանան նա խարդախողին, խլեցին յարմատոց անտի տատմունք խաժանողին Դ. Վասն փայտիդ օրհնութեան

կենաց՝ յորում պրկեցար Աստուածդ անըմբռնելի, ի շաստակաւ բևեռացդ՝ որով ի գործի մարդեղութեան մածուցար արարիչդ երկնի և երկրի, արեւաժայռ տէրունական՝ որով զվիշապն մեծ կարթիւ ածեալ որսացար, լեզուն դառնութեամբ՝ զոր արբեալ ըզդեղատուութիւն կորուսչին արտաքս հեղեր, պատմաբանութեամբ ըզձական ճառիւք կըրիցն տարտմելեաց՝ որով զԼԸրութիւն հակառակողին ըմբռանելոյ ամաչեցուցեր, անուամբ ըզ անհատականաւ ամենայնիւ ընթարգմանելոյդ՝ յորմէ զոանիմարգմանելոյդ՝ յորմէ զոզան և դատապարտին տակացեալ սատակ տարտմամբ ըզնութիւնք ամենայն երևութից և աներևութից, եղիցին այս ամենայն պարգևք շնորհաց

խոտովանելոյս ի պաշտպանութիւն, ի բժշկութիւն և ի քաւութիւն։ Եւ մահաբեր զառնաթոյն օձին, և որ ի նմա ազդեաց տիեզերատարա չարութիւնն, ի սատակումն եզիցի նորին. նայն ինքն ի կորուստ և յանբժշկական հարուած տանջանացն տուիս մատնեսցի, կապեսցի և ըմբռնեսցի։ Եղիցի ոգորմութիւն ստեղծողիդ ընդ իս, և շունչ ոգւոյս իմ ընդ քեզ անբաժանօրէն կապս միացեալ ի մի։

Ե. Եւ որ ոք ընթերցցի զայս աղերս ձայնի մաղթանաց զոչման ազօթից հայցման ծերոյ և երիտասարդի, կուսի և երիտասարդի, և եթէ յազգէնաց ոք պատուեսցի Աստուածամրարար. հաւատարապէս անուշութեամբ

ընկալցին ի քէն մասն երանութեան պարուց ազատութեան, հաստատվ՝ ուստին յանարատութիւն նորոգ մաքրութեան, ընկալեալ զարձեալ զքոյդ կերպարան անխոտորելի։ Ահատիրապէս հնարաւոր, զօրեղ, անպատում, անհաս, անիմանալի, աւետեա ատանօր ի հառաջանս կողկոզանաց այսր հեծութեան, որ ի բոլորից շրթանց ընծայեալ քեզ մատուցանի, վասն Հօր քո երկնաւորի և բարերարի, և Հոգւոյդ սրբոյ փառակցի եւ կենդանատուի, Աստուածածնիդ բարեխօսութեամբ և խնդրուածովք ամենայն սրբոց։ Զի զու ստեղծեր զամենայն, և ի քէն ելեն ամենայնք, եւ զու տիրես ամենայնի. եւ քեզ փառք յամենեցունց, միոնդյիսկութենէ

անժամանակ Երրորդութեանդ զուգակցապէս փառաւորեալ յանդուսս, եւ յաւիտենից յաւիտեանս. ամէն։

Ի խորոց արտից խօսք ընդ Աստուծոյ բաւական Ղ.Ս.

Ս. Տէր Տէր գթութեանց եւ Աստուած ողորմութեանց, անուն մեծութեան, ձայն տնտորութեան, կոչումն ուստակութեան, լուր անհատութեան, բարբառ զղջութեան հնչումն հիացման, յուսադրութիւն բարերարութեանդ. հողարմ քաղցրութեան, յորմէ երկուցեալս ամենայն բնութիւնք երկրայ ի քո ապառնալեաց ահիդ պակուցման, ստատնին Սերո-

բէք, ամիսուին Քերոբէք, պարուրին պարուք լուսակերպիցն, երկնչին հիացմամբ բոլոր Պետութիւնք վերնոցն, նոյնք ցընծան զողութեամբ մեծաւ ի մի նաւակատիս բերկրութեան, զարհուրին զեւք, ընկրկին չարութեանցն գունդք, պակասին խաւարասիրացն հոգիք, պնդընդոց մատնին հրեշտակք օտարին։ Կապին ենչանաւ Սատանին յարձակմունք դիմամարտին, փակին ի ստորին բանտի քինաւորամազեկացիքն, անխզելի հանգուցիւք պաշարին խումբք հակառակորդին, արգելին անզերծ գնդանաւ՝ մահապինացն կաճառք, պնդին ի մեռապս պահեղ հրամանիդ այսականացն գումարք, պապանձին կարիեալ ընդդիմաբանիցն դասակցութիւն

պարաւանդին հիւծմամբ կորըստեան աներևոյթիցն ժողովք, անլոյծ շղթայիւք նեղին առաքելութիւնք զերաքբիատոսին։
Բ. Ահա կարկառեմ մատամբք ձեռինս զտեառնագրութիւն ներշանիդ ի ժամ գիշերիս, որ ոչ մթանաս խաւարաւ անգիտութեան, ամենեին տեսականութիւն, քան թէ ի լոյս անմատոյց հանգուցեալ բնակեաւ Ընկալ զաղաչողս վանգաւոր գոհարան ընդ պահպանութեամբ թեւոց հզօրիդ, փրկեա ի ցնորիցն եկամուտ պղտորութեանց, ուրբ արա զզայարան հայելեայս արտիս նկատմանց. ամրացո փայտիւդ կենաց ի տխրական անրջոց, արեամբ քո սրակեա զշրջարկութիւնս կայիցս, զհետս ելումտիցն կաթուածով կենարար կողիդ գծագրեա. երգոցն պահպանարան քառակերպիդ ձևակերպութիւն եղիցի, հանդէպ տեսութեան աչացս ամբարձման փրկականդ քո կրիս խորհուրդ առ դիցի, ընդ բարաւորյարկիս չարչարանաց քոց գործի հաստիցի, զծառոյդ օրհնութեան հաւատք յուսոյ իմոյ կախեսցի։ Արգել, տէր, սովաւ զաստակիչն հոգւոց, մոցէ անխափան պաշտպանն լուսոյ, և ընդ աստիկ ծանրութեան ցաւոցս և զբեռն պարտեսցս թեթեւացո, զոր ի լռարանի մըտացս ամիտմամն մահճացս անկողնի ուշաբերեալ զյուսահատութեանցն զառնպտղոցն՝ խոստովանիմ ամենագիտիդ զանհամար մատունս գործոց չարաչար անօրէնութեանցս։

Գ. Հանգո զվաստակեալս ի բազմածուխս աշխատութենէ բարձ զտագնապ տարակուսանաց ոգոյս կործանման զդառնութիւնն ընդ վշտացն, զհեծութիւնն ընդ կարեացն, զանձկութիւն ընդ թշուառութեանցն, զհառաչմունսն ընդ խորտակմանցն, ըզ բեկութիւնսն ընդ տիշութեանցն, զթմբրութիւնսն ընդ շըրտմանցն, զարբեցութիւնն ընդ յիմարութեանցն, զթերամտութիւնն ընդ խելացարութեանցն, զաառումն սիրոյն և զհրոյին ջերմութիւն ազուսկան ախտին։ Օժանդակ լիր տկարութեան բազմատխուրս տարտամութեան, բարեգործ աջովդ շնորհի, ձեռամբդ նորոգողի, մատամբդ կենաբաշխի, փառօքդ մշտափայլի, յարակայութեամբ անեղծի, երեսօքդ զուարթականի, իսկութեամբ և իդ պաշտելի, բարձրութեամբդ երկրպագելի։ Հատո զչարաչար հեծութիւն կորստականս խեղդման, զնոր, զիւտ չարին, զհին խարդախութիւն բանսարկուին զօտար ազգեցմունս ի մահ կըրթողին, զանյարմարական երեւոյթս հանապազորթեան եղեռնագործին, զառ աչս հնարադրութիւնն դժնդակդիւին, զողբական բոցաշնչութիւն ձգող կախարդին։ Պահեա ի տեղւոջ հանգստեան մեռօրինակ այսր դադարման յանեբեւոյթ մտածութեանց, ի մասնաւոր սխալութեանց, ի մեծագոյն զայթակղութեանց, ի փոքրագոյն ոտնառութեանց, ի խաբեբայ չար ձանձրութեանց։ Հեռացո

զանհանդէպ մտածութիւնն ի
զգայութեան ցծառայիս, յանցա-
ւորի զկիրս բաղելիս, զվարս
թշնամանելիս, զդիպուածս
պատկառելիս, զնեռավրիպելիս,
զպատիրս ճաղելիս, զխոհու-
զրս անգոանելիս, զաւելաբա-
նութիւնս նշկահելիս: Անսխալ
հոգւով եւ անշաղախ մարմնով
զապաւինեալս ի քեզ հանդեր-
ձեա, ի շնչմանէ հոգմոց, ի
զարկմանէ բռնութեանց ի բախ-
մանէ փոթորկաց, ի յոտմանէ
մրրկաց՝ ի յարձակմանէ գազա-
նաց։ Ի կամիմն աչացս հայեց-
ուած սրտիս մի՛ ատուերոցի,
այլ զուարթացի պայծառացի
վասն յլչացի ընդ քեզ փայլեա-
ցի, Տէր Յիսուս Քրիստոս, լու-
սաւորվառմամբանշիջանելեաւ։
Բանիւ քո սրբեա զպատապա-

նաս բազմականիս ի խորամանե-
կութեանց, ի զրպարտանց, ի քո
ատելի յիշատակաց, ի վերնա-
մարտ մտածմանց, ի քրէական
մորոսութեանց, ի տիրանենգ
անշնորհութեանց, յԱստուած
ընդդէմ հերձուածութեանց։ Գրն-
դիւք վերնայնոցդ վերակացու
ինձ լիցիս, պետութեամբք, իշ-
խանութեամբք զօրաւորքն
անյաղթականաց մաքուր մա-
տակարարացուցիր Աստուածու-
թեանդ. առաքելքն աւետեաց
աւետարանաւն, մարգարէքն կը-
տակարանօքն, մաղթանք եր-
ջանկացն ի կատարածի աւուրն
ընծայեալ։ Որովք նիրհեցիս եր-
կիւղիւ քոյ քեզ տրտմութեամբ,
և զարթեայց շնորհօք քո կրկին
ուրախութեամբ, եթէ վհատու-
թեամբ ննջեցիս, յարեայց զար-

ձեալ հոգևորական բերկրութեամբ. եթէ ընկոզմնեցայց մեզանօք, կանգնեցայց վերատին զառեալ ի խզճէ անազատ ուրբութեամբ։

Ե. Լուր խնդրուածոց ամենահաստատ ձայնիս հնծութեան. միայն բազմագութ, բարեխօսութեամբ սրբոյ Աստուածածնիդ և ամենայն սրբոցդ և նահատակաց ընտրեցս։ Եւ քեզ փառք յամենեցուն յիսուս զշմարիտ վերադարձեալ սրբովք զուարթնոցն անմահականաց զառաց, ի գովեստ Հօր քոյ Աստուծոյ մերոյ և Հոգւոյդ սրբոյ բնութիւն հաստատի և նորոգի, յաւիտ։

Ի խորոց ասեցի խօսք ընդ Աստուծոյ բանի ՂԵ.

Ա. Երանելի՜ սրբոյ, հառագայթ

օրհնեալ, լուսոյ կերպարան, փառք անձկութեան, բարձրեալ ա՛քնին, զօրեզանգատամ, բարոյ բերկրութիւն, յուսոյ տեսութիւն, գովեալ երկնաւոր, թագաւոր փառաց Քրիստոս արարիչ, խոստովանեալ կեանք։ Եւ արդ զթերութիւն վերիպանաց բազմախոյզ ձայնիս ելկեցայս ամենազօրդ բանիս լցեալ մատուցեալ ազատարհաճութեան Հօր քոյ բարձրելոյ։ Որ փառն իսկ ի փարձ եկիրումիցդ, կերպարանեալդ իսկ նմանութիւն, ամենեին կենաց օրհնութիւն, վերնոց և ներքնոց բարեխնամարարաւ չհամայնիցս։ Զի թէ յանձն առեր մեռանիլ փառն իսկ, Աստուած ես Տէրդ բարեբարեաց, որչափ հանեցիս առաւել ևս ոչ ոչ զանազան կրիցս կարեկցել, ընդ իսկ պարարտարեալ

միշտ ազօթելով ապգակցաւ մարմնոյդ առելոյ ի մէնջ՝ առ համանապատիպ քո Հայր։

Բ. Եւ զամն արեանդ պատուական մի ամատուցելոյ ի հաճութիւն կամաց առաքչիդ՝ բարձցին զամանգը մեզ ցալ պատապարանոյս, թողցին պարտիքն, ապաքինեցիամօթն, մատուցին պատկառանքն, բարեգործեցին գաստակնիքն, ստատեցին որդունքն, վերացի լոյն, հանդարտեցէ կրճատն ատամանցն, ապառեցին ոգիքն, հաստին արտասուքն, մեղմեցի սուգն, հարածեցի խաւարն, գատնեցի հուրքն ատատիս թեամբ, հերքեցին տանջանարանքն բազմօրինակք։

Գ. Նիրեցին գթութիւնք կամազիս ապրգանգիս կենացամենից, ծագեցի լոյսդ, արագեցէ վրը-

կութիւնդ, հասցէ օգնութիւնդ, ժամանեսցէ այցելութիւնդ, կանխեսցէ ցօգդ ողորմութեան յառաջեսցէ արբեսցէ զանդատանքս ապաքէս՝ անկեալ ոտիսն բացք թշուառս թեամբ ի վիհն մահու՝ ծաղկեցուսցէ պտղաբերեսցէ բաժակդ ի բինաւորարան կենարարիդ զերկիրս խնամեալ աւարն լուսոյ, որանձախոյսէ միշտ պատարագիս միշտակ կենացս փրկութեան հոգւոցն ընդ ցերց։ Զի ամենայնիւ մահացեալ հոգիս մարմնավրայ մեզ՝ շնորհօք քո գթած, ի քեզ զօրացեալ քև նորոգեցայց, զատեալ ի մեզ անմահ կենդանութեամբ ի յարքութեանն արդարոց, Հօր քում օրհնեցեալ։ Ընդ որում քեզ փառք, և Հոգւոյդ սրբոյ բարեբանութիւն փայլէլական զոհութեամբ, այժմ և։

Սուրբ Սահակաւանս որ ըստ Մասրկոսի

Եւ մինչդեռ ամենայն ընդ այն Յիսուս, զնեա՛ և զեն նորա կայրք երկու, ոգոգակէին՝ և ասէին. Ոգորմեացիր որդի Դաւթի։ Եւ իբրև եկն ի տուն, մատեան առ նա կայրքն. և ասէ ցնոսա Յիսուս. Հաւատայք՝ եթէ կարող եմ առնել ձ՛ոգ գայդ. ասեն ցնա՝ այո՛ Տէր։ Յայնժամսեր ձ՛ ցա՛ յաչս նոցա՝ և ասէ. Ըստ հաւատոց ձ՛ոց եղիցի ձ՛ոգ։ Եւ բացան աչք նոցա. և սաստեաց նոցա Յիսուս՝ և ասէ. Զգոյշ կացէք՝ մի՛ ոք գիտասցէ։ Եւ նոքա ելեալ հրամբաւեցին զնա ընդ ամենայն երկիրն ընդ այն։ Եւ յելանել ինքեանց արտաքս, ահա մատուցին առնա այր մի՝ համր դիւահար։ Եւ յելանել դիւին՝ խո-



ուցաւ համբն. և զարմացան ժողովուրդքն՝ և ասեն. Թէ և ոչ երբէք երևեցաւ այսպիսի ինչ յԻսրայելիս։ Իսկ բարեխաչիքն ասէին, Թէ իշխանաւն դիւաց հանէ զդեւս։

Սուրբ Ադեստարանս որ քան Մարկոսի Եւ էլ լաւ նարա ընդ ամենայն կոգմն Գալիլեացւոց։ Եւ վազվազակիսէաւ ի ժողովրդենէն, եկն ի տուն Սիմոնի և Անդրեայ՝ Յակոբայ և Յովհաննու հանդերձ։ Եւ զոքանչ Սիմոնի գնէր ջերմացեալ և վազվազակի ասեն ցքնա վասն նորա։ Եւ մատուցեալ յարոյց զնա՝ կալեալ զձեռանէ նորա. և եթող զնա տենդն՝ և պաշտէր զնոսա։ Եւ իբրև երեկոյ եղև ի մտանել արեգականն,

բերէին առ նա զամենայն հիւանդս և զդիւահարս, և էր ամենայն բազմաքն ժողովուրդ առ դրունսն։ Եւ բժշկեաց բազում հիւանդս ի պէս պէս ախտից, և դեւս բազումս ելհան։ Եւ ոչ ասէր խօսել զիւացն, զի գիտէին զնա թէ Քրիստոսն է։

Սուրբ Անտոնիոս որ քան Հոգիքառ

Եւ եղև ընդ ասելն ընդ այնոսիկ եէ ի բեռն կալ յազօթս, և հանէր զգի.ն ի գլուխ յազօթսն Աստուծոյ։ Եւ իբրև այգ եղեւ՝ կոչեաց զաշակերտսն իւր, և ընտրեաց ի նոցանէ երկոտասանս զորս և Առաքեալս անուանեաց։ Զ Սիմովն՝ զոր և Պետրոս անուանեաց, և զ Անդրէաս զեղբայր նորին, և զ Յակոբոս

և զՅովհաննէս, և զՓիլիպպոս և զԲարթուղիմէոս. և զՄատթէոս և զԹովմաս, և զՅակոբոս Ալփեայ, և Սիմոնն զկոչեցեալն Նախանձայոյզ, և զՅուդայ Յակոբայ, և զՅուդա Իսկարիովտացի՝ որ եղև իսկ մատնիչ։ Եւ իջեալ նոքօք հանդերձ ի տեղի մի տափարակ. և ժողովաշակերտացն նորա՝ և բազմութիւն յոյժ ժողովրդեանն, յամենայն Հրէաստանէ և յԵրուսաղեմէ՝ և յայնմ կողմանէ՝ և ի ծովեզերէն Տիւրոսի և Սիդոնի. որ եկին լսել ի նմանէ՝ և բժշկել ի հիւանդութենէ իւրեանց. և նեզեալքն յայսոց պղծոց բժշկէին։ Եւ ամենայն ժողովուրդն խնդրէր մերձենալ ի նա, զի զօրութիւն բազում ելանէր ի նմանէ՝ և բժշկէր զամենեսին։

Սուրբ Աւետարանս որ ըստ Յովհաննու

Յետ այսորիկ ոչն էր Հրէից. եւ
ել Յիսուս ի Երուսաղէմ։ Եւ էր ի Ե-
րուսաղէմ ի Պրոպատիկէ աւա-
զանին, որ կոչէր Եբրայեցերէն
Բեթհեզդա, հինգ սրահս։ Յորս
անկեալ զնէր բազմութիւն յոյժ
հիւանդաց՝ կուրաց կաղաց գо-
ատցելոց, որ ակն ունէին ջրոցն
յուզելոյ։ Եւ հրեշտակ Տեառն ի-
ջանէր ըստ ժամանակի յաւազա-
նին՝ եւ յուզէր զջուրսն. եւ որ
նախ ի շարժումն ջրոցն իջանէր
յետ կէր, ոչ ունելով ինչ անհիւան-
դութեան։ Եւ անդ էր այր մի,
որոյ երեսուն եւ ութ ամէր ի
հիւանդութեան իր։ Զնա երբ
տեսեալ Յիսուս՝ գիտակցեալ զնէր,
եւ գիտացեալ թէ բազում ժա-
մանակք են այնուհետեւ, ասէ

գնա. Կամքիս ոչ լինել։ Պատասխանի եմ նմա հիւանդն. Տէր՝ ոչ զոք ունիմ, թէ յորժամ ջուրքն յուզիցին՝ արկցէ զիս, յաւազանն. եւ մինչ ես գանգատիմ, այլ ոք քան զիս յառաջագոյն իջանէ։ Ասէ ցնա Յիսուս. Արի՝ առ զմահիճս քո՝ եւ գնաւ։ Եւ ոչ զայս այրն, եւ յարեաւ՝ առ զմահիճս իւր՝ եւ շրջէր. և էր շաբաթ յաւուրն յայնմիկ։



Պատմութիւն վարուց սրբոյն Եփրիանոսի Եպիսկոպոսին։

ԿԻՊՐԻԱՆՈՍ էր այր մեծազգի ազնուական եւ մեծատուն յոյժ, ուսեալ էր եւ զամենայն հանճարս իմաստութեան եւ հմուտ լեալ մոգութեանն՝ որով ամենայն ազանդոց գիտուն էր։ Եւ կոյս ոչխիկ ոմն էր ի մեծ քաղաքին Անտիոքայ՝ անուն Յուստինէ, քրիստոնեայ՝ կրօնիւք՝ զուստր Եղեսիոսի քրմի կոոց, ուսեալ զհաւատն ի Բրեւիոսէ սարկաւագէ, եւ զարծոյց զծնողսն իւր Աստուած գիտութիւն, և մկրտեցան Յուիտատոսէ եպիսկոպոսէ։

Իսկ հեթանոսն Ազգիզոս ասեն սիրեաց յոյժ զՅուստինէ-

նիա, եւ կամէր առնուլ զնա ի կնութեան. եւ ջանացեալ բազում պատգամաւորօք եւ խոստմամբք՝ եւ ոչ կարաց հաւանեցուցանել։ Յղեաց առ նա Յուստինիա եւ ասէ, Եթէ ես Քրիստոսի եմ հարսնացեալ, եւ մարդոյ երկրաւորիս ոչ ամուսնանամ։

Եւ պատահեալնմա ի ճանապարհին բուռն հարեալ զնմանէ՝ ոչ կարաց ընթանալ, այլ մանաւանդ անարգանօքեւ ամօթալից զարձոյց ի տուն իւր։ Եւ երթեալ առ Կիպրիանոս մոգ, և խոստացաւ տալ նմա երկուս տաղանդս ոսկւոյ եւ արծաթոյ՝ եթէ մոգութեամբ նորա առցէ զՅուստինիա նիա կին։

Եւ կոչեաց Կիպրիանոս ի գիշերին յայնմիկ դեւ մի եւ արձակեաց առ Յուստինիա. եւ երթեալ դեւն եգիտ զերանելի կոյսն զի ազօթէր զերրորդ ժամու գիշերոյն։ Եւ գիտացեալ զգալուստ դիւին արար ընդդէմ նորա զնշան Խաչին և փչեաց ի նա. և դեւն երկիւղիւ մեծաւ փախստականեղեալ գնաց առ Կիպրիանոս։ Եւ նա առաքեաց այլ դև, և նոյնպէս և զնա նշանաւ Խաչին հալածեաց։ Եւ առաքեաց երրորդ անգամ այլդև։ և այնպէս զարձաւ երկիւղալից որպէս ի հրոյ փախուցեալ։

Եւ Կիպրիանոս խոչտանգեաց ըզդեւն՝ և ասասելով նմա հարցանէր, Եթէ էր վասն փախեան և ոչ կատարեցին զհրամայեալսն։ Եւ նորա ասէն, Նշան Խաչելոյն Յիսուսի ոչ միայն զմեզ հալածէ, այլ եթէ և իշխանն մեր

ինքնին գնացէ ամենայն անե-
ւրևոյթ զօրօք իւրովք՝ ամօթա-
լից փախստական լինի ինմանէ։
Եւ լուեալ Կիպրիանոս անէծ ըզ
գևան, և հալածեալ զնոսա յին-
քեանէ՝ հաւատաց ի Քրիստոս. և
առեալ զամենայն զիրս մոգու-
թեան և կախարդանաց հրով այ-
րեաց։ Եւ երթեալ առ սուրբն
Անթիմոս եպիսկոպոսն՝ և պատ-
մեաց խոստովանութեամբ զամե-
նայն զոր ինչ գործեաց մոգու-
թեամբ։ Եւ ի մեծի շաբաթուն
մկրտեցաւ ի կենդանագործն, և յու-
թերորդ աւուրն եղև ընթերցող,
և ի քսանև հինգ օրն եղև Կիպ-
սարկաւագ, և յետ յիսունաւուր
եղև Սարկաւագ։ Եւ յետ տարւոյն
միոյ ձեռնադրեցաւ Քա-
հանայ, և զվերջնական ամ
արժանապէս կատարեաց ըզ

կարգ քահանայութեանն։
Եւ յորժամ հանգեաւ եպիսկոպո-
սըն ի Քրիստոս՝ նստուցին զնա
հաւատացեալքն յաթոռ Եպիս-
կոպոսութեանն։ Եւ ձեռնադրե-
աց զՅուստինոս սարկաւագ-
ուհի և անուանեաց զնա Յուստի-
նեա. եռաւուցանէր և լուսաւորէր
զամենեսեան՝ զհեռաւորս հրդ-
մատակօք, և զմերձաւորս վարդ-
պետութեամբ։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ՀՐԱԺԱՐՈՒՄՆ

Հրաժարիմք ի սատանայէ և յամենայն խաբէութենէ նորա. ի պատրանաց նորա. ի խորհրդոց նորա. ի գնացից նորա. ի չար կամաց նորա. ի չար հրեշտակաց նորա. ի չար պաշտօնէից նորա. ի չար կամարարաց նորա. և յամենայն չար գործս նորա հրաժարելով հրաժարիմք։

Զայս երիցս կրկնէ՝ երես ի յարևմուտս և ձեռս ի կոր ունելով՝ և ապա դառնայ յարևելս և սկսանի զղաւանութիւն ուղղափառ հաւատոյ՝ բացագլուխ և ձեռնամած կերպիւ և ասէ։

Խոստովանիմք և հաւատամք ամենակատար սրտիւ զՀայրն Աստուած անեղ ածին և անսկիզբն. այլ և ծնող Որդւոյ և բղխող Հոգւոյն սրբոյ։ Հաւատամք զԲանն Աստուած՝ անեղ ծնեալ՝ և սկսեալ ի հօրէ նախ քան զյաւիտեանս։ Ոչ յետոյ և ոչ կրտսեր. այլ որքան Հայրն Հայր՝ ընդ նմին և Որդին Որդի Հաւատամք զսուրբ Հոգին՝ անեղ անժամանակ. ոչ ծնեալ՝ այլ բղխեալ ի Հօրէ. էակից Հօր և փառակից Որդւոյ։ Հաւատամք զԵրրորդութիւնն սուրբ՝ մի բնութիւն, մի Աստուածութիւն ոչ երեք Աստուածք, այլ՝ մի Աստուած, մի կամք. մի թագաւորութիւն մի իշխանութիւն. սրարիչ երևելեաց և աներևութից։ Հաւատամք յեկեղեցի սուրբ զթողու-

թիւն մեզաց հաղորդութեամբ սրբոյ։

Հաւատամք զմինն յերիցանձանց զԲանն Աստուած՝ ծնեալ ի Հօրէ նախ քան զյաւիտեանս. ի ժամանակի իջեալ յԱստուածածին կոյսն Մարիամ. առեալ յարենէ նորա՝ միաւորեաց ընդ իւրում Աստուածութեանն. ինն ամսեայ ժուժկալեալ յարգանդի անարատ Կուսին. և եղև Աստուածն կատարեալ՝ մարդ կատարեալ. հոգւով և մտօք և մարմնով. մի անձն մի դէմ և միաւորեալ մի բնութիւն։ Աստուածն մարգացեալ առանց փոփոխման և առանց այլայլութեան. անսերմն յղութիւն և անապական ծնունդ, որպէս ոչ է սկիզբն Աստուածութեան նորա՝ և ոչ վախճան մարդկութեան նորա։ (Զի Յի-

սուս Քրիստոս երէկ և այսօր՝ նոյն և յաւիտեան)։ Հաւատամք զՏէրն մեր Յիսուս Քրիստոս շրջեալ ի վերայ երկրի։ Յետ եռեսուն ամաց եկեալ ի մկրտութիւն։ Հայր ի վերուստ վկայեալ՝ Դա է Որդի իմ սիրելի և Հոգին սուրբ աղաւնակերպ իջեալ ի վերայ նորա։ Փորձեալ ի սատանայէ և յաղթեալ նմա։ Քարոզեալ մարդկան զփրկութիւն։ Աշխատեալ մարմնով, վաստակեալ, քաղցեալ և ծարաւեալ։ Յետոյ եկեալ կամաւ ի չարչարանս. խաչեալ և մեռեալ՝ մարմնով. և կենդանի՝ Աստուածութեամբն։ Մարմինն եղեալ ի գերեզմանի՝ միաւորեալ Աստուածութեամբն. և Հոգւոյն իջեալ ի դժոխս՝ անբաժանելի Աստուածութեամբն։

Քարոզեալ հոգւոյն՝ աւերեալ
զոժոխս՝ և ազատեալ զհոգիսն ։
Յետ երից աւուրց յարուցեալ
ի մեռելոց և երևեալ աշակեր-
տացն ։ Հաւատամք զՏէրն մեր
Յիսուս Քրիստոս նովին մարմն-
ովն համբարձեալ յերկինս և նստ-
եալ ընդ աջմէ Հօր ։ Այլ և գալոց
է նովին մարմնովն և փառօք հօր
իդատել զկենդանիս և զմեռեալս։
Որ և յարութիւն ամենայն մարդ-
կան ։ Հաւատամք և զիատու-
ցումն գործոց. արդարոցն կեանք
յաւիտենական. և մեղաւորացն
տանջանք յաւիտենական ։

ՁՂՁՈՒՄՆ

Մեզայ ամենասուրբ Երրորդու-
թեանն Հօր և Որդւոյ և Հոգ-
ւոյն սրբոյ ։ Մեզուցեալ եմ Ա-
ստուծոյ ։ Խոստովանիմ առաջի

Աստուծոյ՝ և սրբուհւոյ Աստուա-
ծածնին՝ և առաջի քոյ Հայր
սուրբ, զամենայն մեղս զոր գոր-
ծեալ եմ ։ Քանզի, մեզայ խոր-
հրդով բանիւ և գործով. կամայ
և ակամայ. գիտութեամբ և
անգիտութեամբ՝ մեզայ Աստու-
ծոյ ։ Մեզայ հոգւովս և զօրու-
թեամբ սորա՝ մտօքս և շարժ-
մամբ սրտս մարմնովս և ըզ-
գայութեամբ սրտս ։ Մեզայ զօ
րութեամբ հոգւոյս. խորամանկ-
ութեամբ, անզգամութեամբ.
յանդգնութեամբ և երկչոտու-
թեամբ շռայլութեամբ և ժլատ-
ութեամբ. զեղխութեամբ և
անիրաւութեամբ. շարչարա-
նութեամբ. յուսահատութեամբ
և թերամտութեամբ՝ մեզայ Աստ
Մեզայ չար խորհրդով մտացս.
նենգութեամբ. ատելութեամբ.

խեթիւ . մախանօք . յաշախանօք . թուլութեամբ . պոռնկական խորհուրդով արուական. իգական . անանոկան գրաստական . գազանական . ի գիշերի և ի տունջեան երազական գիճութեամբ և յանրջական զարշ աղտեղութեամբ՝ մեղ ։ Մեզայցանկութեամբ մարմնոյս հեշտութեամբ . պղերգութեամբ , յօրանջմամբ.քնոյ՝ շարժութեամբ մարմնոյս և զազրագործութեամբ ի պէս պէս ախտս . հեշտալրութեամբ լսելեացս . արատութեամբ աչացս . ցանկութեամբ սրտիս . խգութեամբ ոբնգացս . պագչուտութեամբ բերանոյս . անժուժկալութեամբ. շուայտութեամբ . և արբեցութեամբ՝ մեզայ Աստուծոյ ։

Մեզայ չարաբանութեամբ լեզ-

ուիս . ստախօսութեամբ ստատերդմամբ երդմնազանցութեամբ հակառակութեամբ. վիճաբանութեամբ . բանսարկութեամբ շոգմոգութեամբ . քսու . դատարկաբանութեամբ. և ծաղր . դրախօսութեամբ. հերձախօսութեամբ և անլծաբանութեամբ . տրտնջելով . զժգոհելով . բամբասելով . և հայհոյելով՝ մեզ ։ Մեզայ գողութեամբ ձեռացս . ագահելով, գրկելով , հարկանելով, սպանանելով, և ընդ զարշ ածելով մեզայ Աստուծոյ ։

Մեզայ ամենայն յօդուածովք շինուածոյս և ամենայն անդամօք մարմնոյս . եօթնեակ զգայարանօքս և վեցեկի շարժմամբս. վերամբարձ ոտնահարութեամբ, և վայրաքարշ մեղկութեամբ յաջ և յահեակ խոտորելով . առաջ-

նոցն մեղայչելով. և վերջնոցն չար նշուկ զոլով՝ մեղայ Աս։ Այլ և մեղայ եօթնիցս յանցանօք մահացու մեղօք։ Հպարտութեամբ և մատամբ նորին։ Նախանձու և մատամբ նորին։ Բարկութեամբ և մատամբ նորին։ Ծուլութեամբ և մատամբ նորին։ Ագահութեամբ և մատամբ նորին։ Որկրամոլութեամբ և մատամբ նորին։ Բղջախոհութեամբ և մատամբ նորին՝ մեղայ Աս։

Այլ և մեղայ ամենայն պատուիրանացն Աստուծոյ. յանձնառնելեացն և հրաժարելեացն. զի ոչ պյանձնառականն կատարեցի և ոչ ի հրաժարելեացն հեռացայ։ Զօրէնս առի՝ և յօրինացն հեռացայ. ի կարգս քրիստոնէութեան հրաւիրեցայ՝ և գործոցս անարժան գտայ։ Գիտելով զչարն՝ կամաւ կորացայ. և ե բարեաց գործոց ինձէն հեռացայ։ Վայ ինձ. վայ ինձ. վայ ինձ։ Զո՞րն ասեմ, կամ զո՞րն խոստովանիմ. զի անթիւ են յանցանք իմ աններելի են ցաւք իմ.. և անարժշկելի են վէրք իմ մեղ։ Հայր սուրբ՝ զքեզ ունիմ միջնորդ՝ հաշտութեան և բարեխօսաւ միածին Որդին Աստուծոյ. զի իշխանութեամբդ որ տուեալ է քեզ՝ արձակեացես զիս ի կապից մեղաց իմոց ազատեմ զքեզ։

ԱՐՁԱԿՈՒՄՆ

Ողորմեացի քեզ մարդասէրն Աստուած և թողութիւն շնորհեացէ ամենայն յանցանաց քոց. խոստովանացելոցդ և մոռացելոցդ։ Եւ ես կարգաւս քահանայ-

ակն ի խանութեան և հրամանաւն Աստուածոյին է՝ (Զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս):
Նոքին բանիւ արձակեմ զքեզ յամենայն մասնակցութենէ մեղաց քոց, ի խորհրդոց ի բանից և ի գործոց. յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ:
Եւ զարձեալ՝ տամ զքեզ ի խորհուրդս սուրբ եկեղեցւոյ. Զի զոր ինչ գործիցես բարիս. եղիցի քեզ ի բարեգործութիւն և ի փառս հանդերձեալ կենացն.
Ամէն:

ՄԱՆԱՍԷԻ ԹԱԳԱՒՈՐԻ

Հէր ամենակալ Աստուած Աբրահամու՝ Իսահակայ՝ Յակոբայ և զաւակի նոցա ուղղարոց. ամենակալ Տէր՝ թող զմեզ իմ. Որ արարեր զերկինս՝ և զերկիր, և զամենայն զարդ նոցա. ամենի Որ կապեցեր զծով բանիւ հրամանի քոյ. փակեցեր զխորս, կընքեցեր ահաւոր և փառաւորեալ անուանքդ քով. ամենակալ Տէր: Որ ամենայն ինչ սարսի և դողայ յերեսաց ահի զօրութեան քո ամենայն Անբաւէ մեծ վայելչութենէն փառաց սրբութեան քո. սաստիկ էբարկութիւն սպառնալեաց քոց ի վերայ մեղաւորաց. անչափ և անքննին են ողորմութիւնք ողորմեաց քոց, ամենակալ.

Տէր բարձրեալ՝ գթած, ող-
որմիւր, բազումողորմ. և
շանաս ի վերայ չարեաց մարդ-
կան. ամենակալ Տէր.
Դու Աստուած՝ ոչ եղեր ապաշ-
խարութիւն վասն արդարոցն՝
Աբրահամու Իսահակայ և Յակո-
բայ, որք ոչ մեղան քեզ. ամե-
Այլ եղեր ապաշխարութիւն վա-
սըն իմ մեղաւորիս. զի մեղայ
ամենի քանզաւազ ծովու, և բազ-
մացան անօրէնութիւնք իմ ամե.
Զեմ արժանի հայել և տեսանել
զբարձրութիւնս երկնից, ի
բազմութենէ անօրէնութեան
իմոյ. ամենակալ Տէր.
Կորացեալ եմ ես ի բազմութենէ
կապանաց երկաթից և ոչ զոյ
ինձ հանգիստ ամենակալ.
Բարկացուցի զքո սրտմտութիւն, և
գՀար առաջի քո արարի. կանգ-

նեցի պատկեր՝ և բազմացուցի
զցասումն անձին իմոյ. ամե.
Եւ արդ Տէր՝ խոնարհեցուցանեմ
զծունր սրտի իմոյ, և հայցեմ ի
քաղցրութենէ քումմէ. ամե.
Մեղայ Տէր մեղայ, և զանօրէ-
նութիւնս իմ ես ինձէն գիտեմ.
ամենակալ Տէր.
Ազաչեմ և խնդրեմ ի քէն՝ թող
ինձ տէր, թող ինձ, և մի կո-
րուսաներ զիս ընտ անօրէնու-
թեան իմոյ. ամենակալ.
Մի յուխտեսն բարկանար ինձ
Տէր, և մի յիշեր զչարիսն իմ. և
մի պարտուորեր զիս ընդ իջեալ-
սըն ի ներքոյ երկրի չարեօք.
ամենակալ Տէր.
Զի դու Աստուած՝ Աստուած ա-
պաշխարողաց ես և յիս ցոյց ըզ
բարերարութիւնդ քո, որ անար-
ժան եմ. անմենակալ.

Կեցուցանես զիս ըստ բազում ողորմութեանն քումմ և ես օրհնեցից զքեզ զամենայն աւուր կենաց իմոց. ամենակալ։

Զքեզ Տէր՝ օրհնեն ամենայն զբարութիւնք երկնից. և քո են փառք յաւիտեանս. Ամէն։

Փառք հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Աժմ և միշտ և։ Աղաչեմ և խնդրեմ ի քէն Տէր, թող ինձ զմեղս իմ։

Բազումողորմութիւնդ ողորմեա ինձ Աստուած՝ քոյոց զիս զմեղս որս ի մեղաց և կեցո։

Աստուած զթա յիս ի մեղուցեալ ծառայս. և ողորմեա ինձ բազմամեղիս։

Ամենօրհնեալ սրբոյն՝ և միշտ կոյս Աստուածածին մարիամ. բարեխօսեա՝ առ Տէր. վասն մեր։

Ամենայնաւորք Աստուծոյ՝ բա-

րեխօսեցէք առ Հայր ի յերկինս վասն մեր մեղաւորացս։

Քրիստոս Որդի Աստուծոյ անեղական, ընկալ զաղաչանս մեր. զի ի քեզ են ապաւինեալ անձինք մեր։

Ցաղթող զօրութեամբ՝ աւուրբ և կենդանարար և պատուական Խաչի քո Տէր՝ պահպանեա զմեզ։

Առաքեալք Տէր զհրեշտակ խաղաղութեան քո. որ եկեալ պատեսցէ զմեզ անխռով ի տուէ և ի գիշերի։

Եւ մարդասիրութեամբ քովն յիշեա զմեզ Տէր՝ յիշեա զմեզ, յորժամ գաս արքայութեամբ քով, և ողորմեա մեզ։

ՍԱՐՈՉ

Ակեալքս ի խաւարումանութիւնս՝ պաշխարութեան՝ հաստատով։

յոյս միածնի որդւոյն Աստուծոյ դիցուք ի սիրտս մեր. խնդրելով ի նմանէ զքաւութիւն և զթողութիւն յանցանաց մերոց.

Վասն զի նա ինքն է նախախնամողն Աստուած յաւիտենական. որ եկն կամաւ հօր ի փրկել զարարածս. և ասաց՝ զինքն լինել քաւիչ մեզաւորաց, յոյս ապաշխարողաց. շնորհելով զանգիտաշխատելոց. ընդունելով զծանրաբեռնեալքս և զտաժանեալքս մեղօք. ապաշխարութիւն քաւութեան։ Արդ՝ եկայք ամենեքեան. խոնարհեալ անձամբք՝ կեալ սրտիւք՝ անկցուք և լացցուք առաջի Տեառն արարչին մերոյ. զի անցուցէ ի մէնջ ըզ ցաւոն պատուհասի յանցանաց մերոց բարերարութեամբն իւրով. Ամենակալ Տէր Աստուած մեր՝ կեցո և ողորմեա։

ԱՂՕԹՔ

Տէր Աստուած փրկութեան մերոյ՝ որ ողորմածդ ես և զթած՝ երկայնամիտ բազումողորմ և զղջանաս ի վերայ չարեաց մարդկան. որ ոչ կամիս զմահ մեղաւորին. այլ՝ զդառնալ նորա ի չարն ճանապարհէն և զկեանն։ Դու Տէր՝ առատ ողորմութեամբ քով ամենեցուն զծառայս քո. և աւուր սոցա տեղի ապաշխարութեան, Հաշտեա մարդասիրութեամբ քով. և արտ զտաս անդամս ի կեղեցւոյ քում արքոյ։ Որպէս զի առողջացեալք հոգւով՝ խոստովանութեամբ և ապաշխարութեամբ մատցեն յեկեղեցի քո սուրբ։

Եւ ընդ ժողովրդեան քում, քեզ հանցեն զօրհնութիւն և զփառս Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս։

ՇԱՐԱԿԱՆՔ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

Հայր բազումողորմ խոստովանիմառ քեզ որպէս զանառակորդին՝ թող ինձ զմեղս իմ և ողորմեա։ Տէր որ գթացար ի կինն քանանացի. գթա՝ և յիսի մեզ-աւորիս և ողորմեա։ Տէր որ դարձուցեր զմաքսաւորն ի զիտութիւն ճշմարտութեան. դարձո և զիս զմոլորեալս և ողորմեա։ Մեղայ Տէր բազումողորմ Աստուած մեղայ ողորմեա։ Մեղայ Տէր և անկանիմ առաջի քո, մեղայ ողորմեա։ Մեղայ Տէր խոստովանիմ զյանցանս իմ. մեղայ ողորմեա։

Մեղաք մինչև յերկինս և զարդար զցասումն քո շարժեցաք ի մեզ. Տէր ըստ մեծի քու ողորմութեանդ ողորմեա մեզ։ Իջաք մինչ ի դժոխսն ընկղմեալքյանօրէնութեան մերում. Տէր յիշեա զզինս արեան Որդւոյ քոյ և ողորմեա։ Հալածեա ի մէնջ Տէր շանաւ Սաչիքոզընդդիմամարտս և զաներևոյթ գազան. և մի տար յապականութիւն զքո ժառանգութիւնս։

Մեղք իմ բազում են յոյժ ծանր են քան զաւազ ծովու. քանզի քեզ միայնոյ մեղայ ողորմեա ինձն Աստուած։ Բաց Տէր զդուռն ողորմութեան որ ողբալով կարդամ առ քեզ. քանզի քեզ մի։ Հեղ յիս զգթութիւնդ քո բա-

զումողորմ և մարդասէր. քանզի. Ողորմեա ինձ Աստուած՝ զի քեզ միայնոյ մեղայ ։ Առաւել լրա զիս ի աղմոյ յանցանաց աղբիւր բժշկութիւնն և ողորմեա, Յարենէ տիրկեա զիս ար հոգւոց եւ մարմնոց ունիս իշխանութիւն և ողոր ։

Մաքսաւորն հառաչանօք ի տա-ճարէն էառ զքաւութիւն. նոմին ձայնիւն և ես գոչեմ ողորմեա ինձ Աստուած ։ Աւազակն աղաղակէր ի Խաչին յիշեա զիս Տէր նոմին։ Անառակ որդին աղերսանօք աղաչէր զքեզ՝ Հայր մեղայ յերկինս և առաջի քո. նոմին ձայ։ Անկանիմ առաջի քո և խնդրեմ զթողութիւն յանցանաց իմոց. մի անտես առներ Հայր զաղաչանս իմ։ Աղաղակեմ որպէս մաքսաւորն և հեզում զարտասուս

իմ առաջի քո որպէս պոռնիկն. մի անտես Յաներևոյթ թշնամւոյն պարտեցայ՝ և ի գաղանի նետից բանսարկուին վիրաւորեցայ. մի անտես առներ Հայր զաս Ալիք յանցանաց զիս ալէկոծեն. և մեղք իմ բազում զիս յանդիմանեն ։ Արդ զինչ արարից մեղուցեալ անձամբս. որ չեմ ապրելոց յահագինն հրոյն։ Մեղայ քեզ Քրիստոս Որդի Աստուծոյ. շնորհեա զթողութիւն բազում յանցանաց իմոց ։

ԱՍԱՑԵԱԼ Ս. ՆԵՐՍԷՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ

Աստուած անեղ անհասակայ,
Հայր գթութեանց ինձ ողորմեա:

Բանդ ի Հօրէ անճառ ծնունդ,
Որ մարմնացար ի յիս գթա:

Գովեալ հոգիդ սուրբ Աստուծոյ,
Որ նորոգողդ ես ողորմեա:

Դաւանողիս երրորդութեան,
Երրորդութիւն ի յիս գթա:

Եւ երկնաւորաց եւ անմահից,
Բանիւ ստեղծող ինձ ողորմեա:

Զազգըս մարդկան յօրինեցեր,
Զեռամբ պատկեր ի յիս գթա:

Երանուհւոյ Աստուածածնին,
Սուրբ ծննդեամբն ինձ ողորմեա:

Ընտրեալ մեծի կարապետին,
Մկրտութեամբն ի յիս գթա:

Թագաւորացն ընդ քեզ յերկինս,
Առաքելոցն ինձ ողորմեա:

Ժառանգողացն զկեանս անճառ:
աղաչանօքն ի յիս գթա:

բերաքանչիւր քո սիրողաց,
Մաքուր հարցմամբն ինձ ողորմեա:

Հուսապսակ քոց վկայիցն,
Հեղմամբ յարեանն ի յիս գթա:

Խաչակցելոյն ընդ քեզ հոգւով,
Պաղատանօքն ինձ ողորմեա:

սէր որդւոց Հայաստանի,
Ես Նազարէթս Վան Տոսպեցի.
Պտուղ հոգւոց Պարտէզ բարի,
Արդեամբ իմով տպագրեցի:

Սա խունկ անուշ Պարտէզ հոգւոյ,
Զմայլին սիրողք ի հոտոյ.
Խօսք ի սիրտ ընդ Աստուծոյ,
Տայ փրկութիւն խօսուն մարդոյ:

Մանկտի Հայոց աղօթասէր,
Աստուածախօս սրտիւ առ Տէր.
Առ զայս ընկալ բոլորանուէր,
Այսու լինիս Աստուածասէր:

ՆԱԶԱՐԷԹ Ա. ԱՌԱՆԵՂԵԱՆ
ՎԱՆԵՑԻ

ՑԱՆԿ

Առաքեա Տէր զլոյս 31
Անկանիմք առաջի քո 54
Աստուած յաւիտենական 62
Աստուած եւ Տէր կեանք 60
Արեգակն արդար 242
Առ հայրն Աստուած 195
Բարեբանեալ Աստուած երկնաւոր 223
Ի դէմ սուրբ Պատարագի 123
Մէջտոպայ վարդապետին 211
Նախ քան զՀաղորդութիւնն 174
Ցեռ հաղորդութեան 185
Պիտակէի եւ հանարակ աւուր 81
Ս. Յովհաննու զառնեցլոյ 169
Սուրբ պատարագին 169
Վասն կապանաց դիւաց 217

Ֆ
Ստ. Ֆ.
00014998
2013
12001